Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ

ԼՈՒՍԱՐԱՐ

25(382)
21.08.2014
Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Лусарар ● ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԹԵՐԹ ● Lusarar

ՎՏԱՆԳԻ ՀԻՇՏ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿՑՈՒՄՈՎ

Արցախի կրթագիտական ու պաշտպանական գերատեսչությունների առաջնահերթություններում միշտ էլ կարևոր տեղ է տրվել բանակ-դպրոց-հասարակություն կապին: Եվ դա բնավ ինքնանպատակ չի արվում. մեր աշխարհագրական դիրքն ու տարածաշրջանում տեղի ունեցող ռազմաքաղաքական իրողությունները մեզ ստիպում են մշտապես զգոն լինել՝ այդ համատեքստում ընդգծելով պետական և հասարակական համապատասխան կառույցների սերտ կապը երկրի պաշտպանական համակարգի հետ: Բնականաբար, վաղվա հայրենիքի պաշտպանը մինչ զինված ուժեր զորակոչվելը հայրենասիրական դաստիարակությունն ու նախնական զինվորական գիտելիքները ստանում է դպրոցում, ինչը, հիրավի՛, բարձր հիմքերի վրա է դրված մեր հանրակրթարաններում: Միայն բնածին խիզախությունն ու քաջությունը քիչ է, կյանքը ցույց է տվել, որ ժամանակակից բանակներին պետք են միայն գրագետ ու հմուտ զինվորներ, ովքեր կարողանում են լավագույնս տիրապետել զինտեխնիկային և ճիշտ կողմնորոշվել տակտիկական իրավիճակներում: Այս բոլորի կարևորումն էլ հենց դարձել է մեր երկրի պաշտպանական համակարգի էական բաղադրիչը, և այդ ամենի մեջ լուրջ դերակատարում ունեն դպրոցները:

Հուլիսի վերջին և օգոստոսի սկզբներին ղարաբաղա-ադրբեջանական սահմանին տեղի ունեցած իրադարձությունները ցույց են տվել, որ ինչպես անցյալ դարի հիննսունական թվականների սկզբներին, հիմա էլ դարձյալ անպարտելի է հայ զինվորը: Մեր մարտիկներին հաջողվել է մեծ կորուստներ պատճառելով ադրբեջանական դիվերսիոն խմբերին՝ անառիկ պահել ԼՂՀ պետական սահմանը: Սահմանային միջադեպերը միաժամանակ փաստել են պաշտպանության բանակի ու քաղաքացիական հասարակության ամուր կապը: Չափազանց կարևոր է այն հանգամանքը, որ դիրքապահ զինվորներին անմիջապես օգնության են գնացել նախկին ազատամարտիկներից բաղկացած կամավորական խմբերը: Կրկին բռունցքվել է Արցախը՝ պաշտպան կանգնելու հերոսների արյամբ ազատագրված մեր նախնյաց հողին:

Օգոստոսյան իրադարձությունների մասին ռազմական փորձագետները հիմնականում միակարծիք են: Ոչ ոք չի ժխտում այն փաստը, որ հետագա լայնածավալ ռազմական բախումը, ինչը տարածաշրջանում կհանգեցներ ծանր արյունահեղության, կանխվել է առաջին հերթին հայ մարտիկների տոկունության ու հայ ժողովրդի վերստին միաբանվելու շնորհիվ: Այն քաղաքական խաղերը, որոնք փորձեցին հերթական անգամ խաղալ մեծ տերությունները, ձախողվեցին, քանզի ամենքի համար պարզ դարձավ, որ Արցախում ապրող ներկա սերունդը նույնպես պատրաստ է հանուն ազատության գնալ զոհաբերության: Առանց պաթետիկ խոսքերի, պարզապես վտանգի ճիշտ գնահատմամբ ու պատասխանատվության գիտակցումով:

Մեր ուսուցիչները կարող են հպարտանալ, որ կարողացել են նման սերունդ դաստիարակել: Ասել է թե՝ հայրենիքի պաշտպանության գործում նրանց ներդրումը մշտապես առկա է: Եվ կրկին անդրադառնալով բանակ-դպրոց-հասարակություն կապին, շեշտենք, որ այդպիսի ճիշտ դոկտրինայով մենք ապահովում ենք վաղվա խաղաղ օրը: Ճշմարիտ է ասված. խաղաղություն ես ուզում՝ պատրաստվիր պատերազմի: Կրթական բնագավառի համար այս պարզ ճշմարտությունը միայն մի հրամայական ունի՝ շարունակել կրթել և դաստիարակել մեր պապերին ու հայրերին արժանի հայրենասեր սերունդ, ինչն էլ հետևողականորեն արվում է:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

ԱՐՑԱԽՈՒՄ ՆԿԱՏՎՈՒՄ Է 1-ԻՆ ԴԱՍԱՐԱՆՑԻՆԵՐԻ ԹՎԻ ԱՃ

ԼՂՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԸ՝ ՈՒՂՈՐՏԻ ՉԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարար Սլավա Ասրյանը Tert.am-ի հետ զրույցում տեղեկացրեց, որ Արցախում վերջին 5 տարիների ընթացքում նկատվում է առաջին դասարանցիների թվի աճ. եթե նախկինում առաջին դասարանցիները թիվը 1700-1800-ի սահմաններում էր, հիմա այդ թիվը գերազանցում է 2000-ը, իսկ այս տարի հավանաբար կլինի 2400 աշակերտ: «Որ համայնքում կա դպրոցահասակ երեխա, մենք այնտեղ ունենք դպրոց, ոչ մի երեխա ուսումից դուրս չի մնում»,-ասաց նա: ԿԳ նախարարն անդրադարձավ նաև դպրոցներում ռազմահայրենասիրական դաստիարակությանը և նշեց, որ այն պատշաճ մակարդակով է իրականացվում. «Յուրաքանչյուր դպրոց ունի կցված զորամաս, և կազմակերպվում են փոխադարձ այցելություններ, հանդիպումներ: Տարածաշրջանում միայն Արցախում է ամռան ընթացքում գործում մեկամսյա ռազմամարզական ճամբար, որտեղ ընդգրկվում են տասնմեկերորդ դասարանի բոլոր պատանիները»:

- Որո՞նք են այսօր Արցախի կրթական խնդիրները:

- ԼՂՀ կրթության համակարգը ՀՀ կրթության համակարգի հետ գտնվում է նույն տարածքում, և այն բարեփոխումները, որոնք իրականացվում են Հայաստանում, իրականացվում են նաև ԼՂՀ-ում: ԼՂՀ-ն, նախկինում լինելով որպես ինքնավար միավոր, կարողացել է պահպանել հայկական դպրոցը, կրթօջախները, մայրենին և հիմա շարունակում է այդ գործընթացը՝ արդեն որպես անկախ պետություն: ՀՀ-ի հետ սերտորեն համագործակցության մեջ գտնվելով՝ Արցախի կրթական համակարգն աստիճանաբար զարգանում է: Պետական քաղաքականության հիմքում դրված է նախադպրոցական հիմնարկների ցանցի վերականգնումը: Այսօր արդեն ունենք 44 մանկապարտեզ, որոնցից 30-ը պետական են, մյուսները՝ Հայ օգնության միության, Ավետարանչական ընկերակցության հովանու ներքո են գործում, և ունենք մեկ մասնավոր մանկապարտեզ: Անցած տարի Ստեփանակերտում բացվեցին նախադպրոցական խմբեր՝ ուղղված մանկապարտեզների բեռնաթափմանը, քանի որ Ստեփանակերտում այդ խնդիրը դեռ լուծված չէ: Պահանջարկը մեծ է, սակայն տեղերը քիչ են: Նախադպրոցական խմբերում մենք ընդգրկեցինք հինգ տարեկան երեխաներին, որոնք այս տարի կընդունվեն առաջին դասարաններ:

- Իսկ աշակերտների թվի ի՞նչ միտում կա:

- Արցախում վերջին հինգ տարիների ընթացքում նկատվում է առաջին դասարանցիների ընդունելության աճ, եթե նախկինում առաջին դասարանցիների թիվը 1700-1800-ի սահմաններում էր, հիմա այդ թիվը գերազանցում է երկու հազարը: Այս տարի հավանաբար կլինի 2400 աշակերտ:

- Իսկ Ղարաբաղում արտագաղթի կանխման և ներգաղթին ուղղված ի՞նչ աշխատանքներ են իրականացվում:

- Ղարաբաղում արտագաղթը շոշափելի չէ, և եթե կա արտագաղթ, ապա կա նաև ներգաղթ, և մեկը մյուսին լրացնում է: Յուրաքանչյուր տարի բնակչության թվի աճ է գրանցվում: Առաջին հերթին ես դա վերագրում եմ, որ յուրաքանչյուր արցախցի մտածում է, որ իրենց զավակների ազատագրված հողին տեր պետք է կանգնի, հասարակական մղում և պարտավորություն կա ընդհանուր ժողովրդի առաջ, որ եթե մենք չապրենք Ղարաբաղում, ո՞վ պետք է ապրի: Իշխանությունները բավականին քայլեր են ձեռնարկում գյուղի և տարբեր ենթակառուցվածքների զարգացման ուղղությամբ և տարեցտարի աշխատատեղեր են ավելանում: Չեմ կարող ասել, որ ամբողջությամբ այդ հարցերը լուծված են, սակայն տարեցտարի ժողովրդի կենսամակարդակը աճում է: Սոցիալական բազմաթիվ ծրագրեր կան, որոնք նպաստում են ծնելիության աճին և մարդկանց կյանքը ինչ-որ չափով բարելավում են:

- Սահմանամերձ գյուղերի դպրոցները ի՞նչ վիճակում են:

- Որ համայնքում կա դպրոցահասակ երեխա, մենք այնտեղ ունենք դպրոց: Դա հատկապես վերաբնակեցված շրջաններին է վերաբերում: Մասնավորապես Քաշաթաղի շրջանում ունենք հիսուն դպրոց, մի շարք բնակավայրերից երեխաները մեքենաներով տեղափոխվում են դպրոցներ, այսինքն՝ ոչ մի երեխա ուսումից դուրս չի մնում: Չնայած դրան, մենք մասնագետների համալրման խնդիր ունենք, և վերջին տարիներին կառավարությունը մանկավարժներին այդ վայրեր գործուղելու որոշում ընդունեց, ըստ որի՝ այն մանկավարժները, ովքեր սահմանամերձ գյուղեր կգնան աշխատելու, նրանք հիսուն տոկոս հավելավճար և բնակարանավարձ կստանան: Չենք կարող ասել, որ հարյուր տոկոսով մենք այդ խնդիրը լուծել ենք, սակայն բոլոր դեպքերում դպրոցները գործում են, տարեցտարի մանկավարժական կազմի, վերանորոգման, նոր դպրոցների կառուցման ծրագրեր են իրականացվում:

- Վերաբնակեցման ուղղությամբ աշխատանքներն ինչպե՞ս եք գնահատում:

- Բուն Ղարաբաղի ներսում վերաբնակեցման անհրաժեշտություն չի առաջանում, մենք ունենք գյուղեր, որոնք բնակչության թվի, տնտեսության զարգացման տեսակետով արդեն կայացած գյուղեր են, սակայն ունենք գյուղեր, որոնք փոքրաթիվ են: Ներգաղթի խնդիրները Հայաստանի և սփյուռքի ներգաղթի միջոցով պետք է իրականացնել: Կան առանձնահատուկ ծրագրեր, որոնք վերաբերում են հենց այդ շրջանների տնտեսության և ենթակառուցվածքների զարգացմանը:

- Ի՞նչ կասեք Արաքսի ափի զարգացման ծրագրի մասին:

- Արաքսի ափի հողերն օժտված են բերրիությամբ և ճիշտ մշակման դեպքում կարող են Արցախի որոշ մասի պարենային խնդիրները լուծել: Այս քայլերն արդեն որպես պետական ծրագրեր իրականացվում են: Առաջին բնակավայրերը ստեղծված են. այդպես էլ անվանվում է՝ Արաքսավան, և այնտեղ բազմաթիվ միջոցառումներ ենք իրականացնում: Նախագահի մասնակցությամբ երիտասարդների հետ հանդիպումներ են եղել, և նրանք պատրաստակամություն են հայտնել որոշակի աշխատանքներում իրենց օգտակար ներդրումն ունենալ:

- Հաշվի առնելով չավարտված պատերազմը, դպրոցներում ռազմահայրենասիրական դաստիարակությունն ինչպե՞ս եք գնահատում և այդ ուղղությամբ ի՞նչ աշխատանքներ են իրականացվում:

- Ղարաբաղի դպրոցներում ընդհանրապես ռազմահայրենասիրական դաստիարակությունը գտնվում է պատշաճ մակարդակի վրա: Դեռևս մինչև նախապատերազմական շրջանը, ղարաբաղյան դպրոցներում սկսվեց դասավանդվել ռազմագիտություն առարկան, և երևի այդ առարկայի դասավանդումը և կատարած միջոցառումների անցկացումը նպաստեց, որ մեր երիտասարդությունը պատրաստ էր պատերազմի: Հիմա առավել ևս դպրոցի համար առաջնային է ռազմահայրենասիրական դաստիարակությունը: Մեր գրեթե բոլոր կրթօջախներում կան հայրենասիրական անկյուններ, որտեղ տվյալ բնակավայրի զոհվածների, ազգային հերոսների նկարներն են փակցված, և կապը Պաշտպանության բանակի հետ շատ սերտ է: Յուրաքանչյուր դպրոց ունի կցված զորամաս, և կազմակերպվում են փոխադարձ այցելություններ, հանդիպումներ: Տարածաշրջանում միայն Արցախում է ամռան ընթացքում գործում մեկամսյա ռազմամարզական ճամբար, որտեղ ընդգրկվում են տասնմեկերորդ դասարանի բոլոր պատանիները: Այս ճամբարին մասնակից են եղել նաև Լիբանանից, Իրանից, ունեցել ենք ներկայացուցիչներ Հայաստանից, մասնավորապես՝ «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրն է ակտիվորեն մասնակցում Ղարաբաղի դպրոցների գործունեությանը: Ընդհանրապես բավականին մեծ կապեր են ստեղծված Հայաստանի և սփյուռքի այլ կրթօջախների հետ:

- Հաշվի առնելով, որ մեր հաղթանակի գրավականը մարդկային գործոնն էր և ոչ թե ռազմական կամ քանակական առավելությունը, ինչպե՞ս եք գնահատում բարոյահոգեբանական մթնոլորտը՝ առավել ևս, որ հիմա լարված վիճակ է:

- Ես համամիտ չեմ, երբ ավագ սերունդը ինչ-որ չափով փորձում է թերագնահատել ներկա սերնդին: Ճիշտ չէ ասել, թե այսօրվա սերունդը պատրաստ չէ հայրենիքի պաշտպանությանը, այսօր առավել քան պատրաստ է, յուրաքանչյուր արցախցի իր հողի տերն է, հայրենիքի պաշտպանն է: Այսօրվա մեր բանակը ամենամարտունակ բանակներից մեկն է, և նաև այս վերջին իրադարձությունները հաշվի առնելով՝ կարող ենք ասել, որ մեր բանակը վերստին ցույց է տալիս, որ պատրաստակամ է իր հայրենիքը պաշտպանել և թշնամու ցանկացած ոտնձգություն կարողանում է կանխել:

- Որպես նախարարություն, բացի Հայաստանից, թեկուզ ոչ պաշտոնապես, համագործակցություն կա՞ այլ երկրների նախարարությունների հետ, և ի՞նչ է արվում միջազգային հանրությանը ներկայանալու առումով:

- Այս ամռանը Ստեփանակերտում Բոլոնյան գործընթացի համատեքստում հրավիրվեց միջազգային գիտաժողով՝ «Կրթություն առանց խտրականության» խորագրով, որին մասնակցում էին արտերկրի միջազգային փորձագետներ, տարբեր կազմակերպությունների ներկայացուցիչներ, մեծ հանձնախումբ էր ներկայացված ՀՀ-ից՝ ԿԳ նախարար Արմեն Աշոտյանի գլխավորությամբ: Մենք հրավիրել էինք նաև հիմնականում չճանաչված պետությունների ներկայացուցիչներին, սակայն միայն Մոլդովական Հանրապետության պատվիրակությունն էր ԿԳ նախարարի գլխավորությամբ ներկայացել: Ամեն դեպքում գիտաժողովն անցավ բավականին բարձր մակարդակով, ընդունվեց համապատասխան բանաձև, և բոլոր ելույթ ունեցողները նշում էին, որ կրթության մեջ չի կարելի խտրականություն դնել, իսկ նման խոչընդոտների մենք հանդիպում ենք:

ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ

ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ 6-ՐԴ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ԲԱՆԱՁԵՎ

Օգոստոսի 4-8-ը տեղի է ունեցել ՀՀ կրթության և գիտության նախարարության կազմակերպած համահայկական 6-րդ խորհրդաժողովը, որին մասնակցել են Սփյուռքի 17 երկրների, ԼՂՀ և ՀՀ կրթության ոլորտի շուրջ 140 ներկայացուցիչներ: Արցախից մասնակցել են ԼՂՀ կրթության և գիտության նախարար Սլավա Ասրյանը, Մարտունու շրջվարչակազմի կրթության բաժնի վարիչ Ջորիկ Ղուլյանը, Ասկերանի շրջանի Աստղաշենի միջնակարգ դպրոցի տնօրեն Սլավա Գրիգորյանը, Քաշաթաղի շրջանի վարչակազմի մշակույթի, սպորտի, երիտասարդության բաժնի պետ Էդիկ Չուխաջյանը, Բերձորի հ.2 դպրոցի ուսուցչուհի Հասմիկ Կարապետյանը: Խորհրդաժողովն ամբողջությամբ նվիրված էր Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին ընդառաջ կազմակերպվող դպրոցական միջոցառումների անցկացման և համապատասխան նյութի դասավանդման խնդիրներին:

Խորհրդաժողովի բացման հանդիսավոր արարողությունը տեղի է ունեցել Երևանի Առնո Բաբաջանյանի անվան համերգասրահում: Ընթերցվել է ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի ուղերձը՝ ուղղված խորհրդաժողովի մասնակիցներին, որում մասնավորապես ասված է. «Մեսրոպ Մաշտոցի ժամանակներից ի վեր հայ դպրությունը և հայ ուսուցիչները եղել են մեր ազգային ինքնությունը պահպանող հիմնական շարժիչ ուժը: Մեր իրականության մեջ ուսուցիչը ոչ միայն գիտելիք է փոխանցել իր սաներին, այլև եղել է աշակերտների ազգային ինքնագիտակցության ամրապնդման հիմնական պատասխանատուն: Հայաստանի Հանրապետությունը՝ որպես անկախ պետություն, դարձել է աշխարհասփյուռ հայության ազգապահպանման ու զարգացման երաշխավորը, բայց դրանով բնավ չի նվազել հայ ուսուցչի դերը ոչ Հայրենիքում, ոչ էլ Սփյուռքում: Հայաստանի Հանրապետությունը հանձնառու է աշխարհասփյուռ մեր ժողովրդի հայապահպանության գործում և շարունակաբար ավելացնելու է իր ջանքերն այդ ուղղությամբ: Այժմ Հայաստան-Սփյուռք համահայկական 6-րդ կրթական խորհրդաժողովի հովանու ներքո հնարավորություն է ստեղծվում համախմբելու բոլորիդ՝ ազգային կրթական խնդիրները քննարկելու նպատակով: Վստահ եմ, որ այս խորհրդաժողովը հայ դպրության նոր և կարևոր հանգրվանի դեր է կատարելու»:

Բացմանը հնչել են նաև Ամենայն Հայոց կաթողիկոս Ն.Ս. Օ. Տ.Տ Գարեգին Երկրորդի և Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Արամ Առաջինի օրհնության գրերը:

Հաջորդ օրերին խորհրդաժողովն աշխատանքները շարունակել է Աղվերանում: Լսվել են երկու զեկուցումներ՝ կրթական համակարգի շուրջ: ՀՀ ԿԳ նախարարի տեղակալ Կարինե Հարությունյանը և ԼՂՀ ԿԳ նախարար Սլավա Ասրյանը ներկայացրել են Հայաստանում և Արցախում կրթական բարեփոխումների ընթացքը:

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին ընդառաջ կրթության ոլորտում միասնական գիտակցությամբ գործելու, Հայաստան-Սփյուռք կրթական հարաբերություններն ամրապնդելու նպատակով 17 լիագումար նիստերում և 4 մասնախմբերում կազմակերպվել են համատեղ քննարկումներ:

Մեծ հետաքրքրություն է ներկայացրել Հայոց ցեղասպանության թանգարանի տնօրեն Հայկ Դեմոյանի ելույթը: Նրա տեղեկացմամբ երկուսուկես անգամ մեծացել է թանգարանի տարածքը և ըստ այդմ՝ ցուցադրվող նյութերը: Այսուհետ գործելու է նաև առանձին մասնաշենք՝ դպրոցականների համար:

Խորհրդաժողովում քննարկվել են նաև հանրակրթական դպրոցներում գործածության երաշխավորված դասագրքերի, ձեռնարկների որակի և դրանց հրատարակման համար կազմակերպվող մրցույթների հարցերը: Հրատարակչությունները ներկայացրել են թեմային և ընդհանրապես հայոց պատմության վերաբերյալ ձեռնարկները: Այսպես, «էդիթ պրինտ» հրատարակչությունը ներկայացել է «էլեկտրոնային այբուբեն» ծրագրով:

Համաժողովի ընթացքում հնչած առաջարկությունների հիման վրա ընդունվել է բանաձև՝ հետևյալ բովանդակությամբ.

1. Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված աշխատանքների ուղղությամբ՝ Սփյուռքի, Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության բոլոր օղակներում կարևորել Հայոց ցեղասպանության և Հայ Դատի վերաբերյալ ածող սերնդի կողմից ճշմարիտ պատմական գիտելիքների ձեռքբերումը և մշտապես պահանջատեր լինելու դիրքորոշումը՝ գերխնդիր դարձնելով ճանաչման, դատապարտման և հատուցման ուղենիշը:

2. Հայոց ցեղասպանության հարցերին անդրադառնալիս հայագիտական դասընթացներում՝ կարևորելով ցեղասպանության պատճառները, նախապատմությունը, ընթացքը, հետևանքները, ինչպես նաև բացասական ազդեցությունների վերացման, դատապարտման և հատուցման գիտակցական ձևավորումը, Հայոց ցեղասպանության պատմական իրողությունն ու դրա իրավական կողմերը դիտարկել աշխարհում տեղի ունեցած և ճանաչում ստացած ցեղասպանությունների համատեքստում:

3. Ստեղծել Հայոց ցեղասպանության վերաբերյալ ուսումնաօժանդակ տարատեսակ նյութեր՝ հաշվի առնելով թիրախային խմբերի հոգեբանական առանձնահատկությունները:

4. Քաջալերել Հայոց ցեղասպանության մասին և նրան առնչվող գեղարվեստական, վավերագրական, ճանաչողական հայերեն և օտարալեզու գրականության հրատարակումն ու տարածումը:

5. Ուսուցիչների, մանկավարժական որակավորում տվող համալսարանների ուսանողների համար նախատեսել ուսումնական նյութեր Հայոց ցեղասպանության մասին, ծանոթացնել համապատասխան միջազգային պայմանագրերին, կոնվենցիաներին և դրանց իրավական բովանդակությանը:

6. Նպաստել Հայոց ցեղասպանության զոհերի ժառանգների կրած հոգեբանական վնասվածքների ուսումնասիրությանը և հետևանքների վերացմանն ուղղված աշխատանքներին:

7. 2015թ. իրականացվելիք կրթամշակութային միջոցառումները նվիրել Հայոց ցեղասպանության 100-րդ ամյակին:

8. Մշակել և ուսուցիչներին տրամադրել բազմաբնույթ նյութեր՝ հայոց հերոսամարտերի, մասնավորապես Արցախյան ազատամարտի դրվագների և հերոսների մասին:

Սեփ. լրատվություն

«ԱՐԻ ՏՈՒՆ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՄԲԱՐՈՒՄ

Ողջ հայության մայր հայրենիքը Հայաստանն է: Եվ յուրաքանչյուր հայ պարտավոր է իր գործունեությամբ հնարավորին չափ նպաստել հայոց երկրի ծաղկմանն ու բարգավաճմանը: Իր գոյության ողջ ընթացքում հայը, ենթարկվելով տարբեր հալածանքների, հարկադրաբար լքել է հայրենի հողն ու հաստատվել օտար ափերում՝ հայրենիքից հեռու: Եվ երկարատև բաժանման արդյունքում հայ պանդուխտի սիրտը կարոտով է լցվել ու միշտ փափագել է օրերից մի օր պապենական հողում հաստատվել:

ՀՀ սփյուռքի նախարարության կազմակերպած «Արի տուն» միջազգային ճամբարի շնորհիվ ինչ-որ չափով ի կատար ածվեց սփյուռքահայերի վաղեմի երազանքը: Բազում հայ երեխաներ աշխարհի տարբեր ծայրերից մեկնարկեցին իրենց էքսկուրսիան դեպի Հայաստան: Տասնհինգօրյա այդ անմոռանալի հանգստին մասնակցում էին պատանիներ և աղջիկներ Վրաստանից, Ռուսաստանից, Ուկրաինայից, Չեխիայից, Նիդեռլանդներից, ԱՄՆ-ից, Կանադայից, Ավստրիայից, Կորեայից և այլ երկրներից: Առաջին տասն օրը նրանք շրջեցին Հայաստանով և հիացան հայոց աշխարհի հրաշքներով և գեղատեսիլ բնությամբ:

Ճամփորդությանը հաջորդեց հնգօրյա ճամբարը, որին մասնակցեց նաև Արցախը: Մենք՝ Ստեփանակերտի մի խումբ դպրոցականներ՝ թվով 17 հոգի, խմբի ղեկավար Անահիտ Մեսրոպյանի գլխավորությամբ մեկնեցինք Ծաղկաձոր՝ մասնակցելու «Արի տուն» միջազգային ճամբարին: Ընկեր Մեսրոպյանի առաջարկությամբ կանգ առանք Գորիսում և այցելեցինք Ակսել Բակունցի տուն-թանգարան: Ավելի շատ տեղեկություններ ստացանք հայ մեծանուն գրողի կյանքից:

Կեսօրին Ծաղկաձորում էինք: Ճիշտ է, երկարատև ճանապարհից շատ էինք հոգնել, սակայն ճամբարականների ջերմ ընդունելության շնորհիվ մեզ շատ լավ էինք զգում: Ճամբար մտնելուն պես բոլորը միաձայն կանչեցին՝ «Ար-ցա~խ, Ար-ցա~խ», որը մեծ ոգևորություն առաջացրեց:

Ճամբարում անցկացրած այդ հինգ օրը հագեցած էին տարաբնույթ միջոցառումներով: Առավոտյան ութն անց կեսին բոլորը կազմ ու պատրաստ կանգնած էին բակում: Բարձր հնչում էր երաժշտությունը, և այդ տրամադրող հնչյունների ներքո կատարում էինք լիցքային վարժություններ, մարզում մեր մկանները և ուրախ պարում: Այնուհետև կանոնավոր խմբերով գնում էինք ճաշարան:

Նախքան ուտելը հոտնկայս աղոթում էինք: Ճաշացանկը շատ հագեցած էր, և բոլորը հեռանում էին գոհ ու շնորհակալ: Հմուտ խոհարարների պատրաստած կերակուրները շատ համեղ ու գրավիչ էին:

Նախաճաշին հաջորդում էր խաղի ժամը: Ճամբարականները թիմեր կազմած՝ զանազան խաղեր էին խաղում: Բոլորը մեծ հաճույքով էին մասնակցում հաջորդող երգի և պարի ժամերին: Այդ ընթացքում նրանք սովորեցին հայկական երգեր ու պարեր: Մեծ խանդավառությամբ էին պատրաստվում ճամբարի փակման օրը կայանալիք միջոցառմանը: Այնուհետև ճաշում էինք և պատրաստվում մրցույթին: Կայացան պարանի ձգման, վոլեյբոլի, վազքի և այլ մրցումներ: Արցախի թիմը գրավեց պատվավոր 2-րդ հորիզոնականը: Մեր երջանկությանը սահման չկար, քանի որ մեր մրցակիցները բավականին ուժեղ տղաներ էին:

Մենք՝ արցախցիներս, շատ էինք շփվում սփյուռքահայ մեր եղբայրների ու քույրերի հետ, ծանոթանում նրանց ապրելակերպին, երազանքներին, նոր ընկերներ ձեռք բերում, որոնց հետ կապը շարունակում ենք սոցիալական ցանցերով, բայց այն հույսով, որ շուտով նրանց կհյուրընկալենք Արցախում:

Ճամբարում մենք ունեինք ավագ ընկերներ՝ ջոկատավարներ, ովքեր մեծ հոգատարությամբ էին մեզ վերաբերվում: Նրանք մեզ անակնկալ մատուցեցին. տարան Կեչառիսի վանք, որը գտնվում է հենց Ծաղկաձորում:

Ճամբարը կազմված էր երկու հարյուր հոգուց, և դա շատ պատասխանատու ու դժվարին առաջադրանք էր, որը նրանք անթերի կատարեցին: Մենք եկեղեցում աղոթեցինք, մոմ վառեցինք և ականատես եղանք մի հրաշալի արարողության. մի փոքրիկ իր մկրտությունն էր ստանում: Ամենքս մի փոքրիկ հուշանվեր գնեցինք և վերադարձանք ճամբար:

Երեկոյան, ընթրիքից հետո խաղեր էինք կազմակերպում, իսկ մինչև կեսգիշեր շքեղ լուսավորության ներքո պարում էինք և ուրախանում:

Կցանկանայի մեր խորին շնորհակալությունը հայտնել ճամբարի պետ Արթուր Հովակիմյանին, ջոկատավարներին՝ հոգատար և արցախցիներիս նկատմամբ առանձնահատուկ վերաբերմունքի համար. հենց նրանց նախաձեռնությամբ եղանք Ծաղկաձորի ճոպանուղում, հիանալի ժամանակ անցկացրինք «Մարիոթ» ակումբում:

Եվ ահա մոտեցավ վերջին օրը: Բոլորն աշխատում էին ավելի շատ ժամանակ անցկացնել միմյանց հետ: Շատ հաճելի էր նրանց հետ շփումը: Սփյուռքահայերից շատերը գիտեն հայոց այբուբենը և առանց դժվարության կարդում ու գրում էին: Սակայն ցավով եմ նշում այն փաստը, որ շատերը պատկերացում չունեն հայկական երկրորդ հանրապետության՝ Լեռնային Ղարաբաղի մասին: Դա ինձ համար շատ ցավալի փաստ էր, և ես իմ բոլոր ծանոթներին ներկայացրի մեր այս մի բուռ հողի հերոսական ուղին և նրա գոյության համար վճարված թանկ գինը՝ բազում հայ քաջորդիների թափած արյուն և զոհաբերած կյանքեր:

Երեկոյան տեղի ունեցավ ճամբարի փակման հանդիսավոր արարողությունը: Մասնակցում էին պաշտոնատար անձինք: Բոլորս հուզված էինք, սակայն մեծ ոգևորությամբ արտասանեցինք, երգեցինք ու պարեցինք:

Գիշերը մեծ խարույկ վառեցինք ու շուրջպար պարեցինք: Երեխաները շտապում էին բոլորից գրություն վերցնել: Ամենքը մի գրիչ վերցրած՝ «Արի տուն» վերնաշապիկների վրա բարեմաղթանքներ էին գրում, միմյանց գրկում և հրաժեշտ տալիս:

Առավոտյան բոլորը պատրաստ էին մեկնել Երևան, իսկ արցախցիները՝ Ստեփանակերտ: Ճանապարհին կանգ առանք կապուտակ Սևանի ափին, լողացանք և շարունակեցինք մեր ճանապարհը:

Խորին շնորհակալություն՝ կազմակերպիչներին, աջակիցներին՝ նման անմոռանալի հանգիստ ապահովելու համար: Հուսով եմ՝ այս ծրագիրը ինչ-որ չափով կնպաստի հայրենադարձության գործընթացին:

Այդ օրերը միշտ կմնան մեր հուշերում և կկազմեն մեր հիշողությունների ոսկե շղթայի մի կարևոր օղակը:

Անահիտ ՊՈՂՈՍՅԱՆ
Ստեփանակերտի Ա. Սախարովի անվան հ. 8 ավագ դպրոցի 12-րդ Բ2 դասարանի աշակերտուհի

ՄԵԹՈԴԱԿԱՆ

ՄԵԹՈԴԱԿԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԳՐԱՃԱՆԱՉՈՒԹՅՈՒՆԻՑ

Հաշվի առնելով մեր ուսումնասիրությունների եվ դիտարկումների արդյունքներն ու եզրահանգումները, գրաճանաչության գործընթացում առաջացած դժվարությունների հաղթահարման նպատակով երաշխավորում ենք.

Հոդվածը նախատեսված է հանրակրթական դպրոցների կրտսեր օղակում դասավանդող ուսուցիչների, օղակը վերահսկող համապատասխան առարկայական մասնախմբի նախագահների, ուսումնական գծով փոխտնօրենների և առարկայով հետաքրքրվող անձանց համար:

Մեր բազմամյա մանկավարժական փորձի արդյունքների վերլուծության, ինչպես նաև վերջին տասնամյակում ուսուցիչների վերապատրաստման գործընթացում ժամանակակից կրթական ծրագրերին ծանոթանալու և դրանցով վերապատրաստվելու, ձեռք բերա-ծը փորձարկելու, դիտարկելու և քաղած հետևությունների հիման վրա մենք առաջարկում ենք գրաճանաչության դասի կազմակերպման մեթոդական երաշխավորություններ, որոնց հիման վրա կարող ենք տարածաշրջանում երաշխավորված «Այբբենարանով» առաջին դասարանում սովորող աշակերտների մոտ առանց դժվարությունների կազմակերպել գրաճանաչության գործընթացը: Իսկ եթե գրաճանաչությունը նպատակային և արդյունավետ կազմակերպվի, 2-4-րդ դասարաններում ուսուցումը կդառնա մատչելի, հետաքրքիր ու բազմաբովանդակ :

Հուսով ենք՝ ուսուցիչները, հանգամանորեն ծանոթանալով հոդվածին, գրաճանաչության դասավանդման գործընթացում կունենան մեծ հաջողություններ, ինչն էլ կարևորագույն նախադրյալ է կրտսեր օղակում ծրագրային պահանջներն իրականացնելու և կրթական առարկայական չափորոշիչներին հասնելու գործընթացում :

1. 6 տարեկանում հատուկ ուշադրություն պետք է դարձնել այն բանին, թե երեխան պատրա՞ստ է, արդյոք, դպրոցական կյանքի և ուսումնառության համար:

Դպրոցական ուսումնառությանը պատրաստ լինել՝ չի նշանակում միայն գրել-կարդալ, հաշվել իմանալ, այլ ընդգրկում է երեխայի անձի բոլոր կողմերը՝ սկսած ֆիզիկական զարգացումից մինչև հատուկ գիտելիքների և կարողությունների առկայությունը:

Առանձնացվում են դպրոցին պատրաստվածության հիմնախնդիրների չորս խումբ՝

-սոցիալական
-ֆիզիկական
-հուզակամային
-իմացական

Սոցիալական պատրաստվածությունը ներառում է երեխայի՝ հասակակիցների հետ շփվելու, իր վարքը, խմբի կանոններին ենթարկելու, աշակերտի դերը կատարելու պահանջը:

Ֆիզիկական ոլորտն ընդհանուր առողջությունն է: Ընդհանուր ֆիզիկական զարգացումը կանոնավոր քաշն է, հասակը, մկանային տոնուսը, և այլն, որոնք համապատասխանում են 6-7 տարեկան տղաների և աղջիկների ֆիզիկական զարգացածության պահանջներին: Տեսողության, լսողության, մատների նրբաշարժումների (մոտորիկայի) զարգացածության աստիճանը: Երեխայի նյարդային համակարգի վիճակը՝ գրգռվածության և հավասարակշռվածության աստիճանը: Ընդհանուր առողջական վիճակը: Ֆիզիկական ոլորտի պատրաստվածությունը նշանակում է շարժումների ճշգրտություն, ձեռքի վարժվածություն մանր շարժումներ կատարելուն, աչքի և ձեռքի շարժման համաձայնեցվածություն, գրիչ, մատիտ բռնելու և դրանք գործածելու կարողություն:

Հուզակամային ոլորտը. անմիջական ցանկությունները սեփական կամքին ենթարկելու կարողությունն է: Երեխայի համար դժվար է հարմարվել դպրոցական կյանքին, եթե նա չի կարող տիրապետել և ղեկավարել սեփական անձը: Նա պետք է ժամանակին դպրոց գա, որոշակի ժամանակահատվածում դասարանում նստի, առաջադրանքները կատարի:

Իմացական ոլորտն իր մեջ ներառում է հետևյալ գործընթացները՝ ուշադրություն, հիշողություն, երևակայություն, մտածողություն, ինչպես նաև ձեռքի մանր մոտորիկայի կամ նրբաշարժումների զարգացածության աստիճանը: Ձեռքի մանր մոտորիկայի զարգացածությունը նպաստում է խոսքի զարգացմանը, քանի որ խոսքի կենտրոնը և այն կենտրոնը, որը պատասխանատու է մատների շարժումների կոորդինացիայի համար, գլխուղեղում գտնվում են իրար կից և փոխազդում են միմյանց վրա: Նկարչությունը, ապլիկացիան, գրաֆիկական վարժությունները կնախապատրաստեն նախադպրոցականներին գրելու հմտությանը: Նախադպրոցական տարիքի ավարտին երեխայի ձեռքը գրելուն պատրաստ է լինում:

Նշված գործընթացները պահանջում են առանձնահատուկ ուշադրություն, քանի որ այս տարիքում դրանք առավելապես ենթակա են զարգացման և կատարելագործման, և դրանց զարգացածության աստիճանից մեծապես կախված է ապագայում երեխայի հարմարված, հոգեբանորեն հասուն և հաջողակ լինելը:

2. Վերականգնել և կանոնավոր ու նպատակային դարձնել մեր նախկին ավանդույթը. դպրոց հաճախող 6 տարեկան երեխաներին դպրոց հրավիրել օգոստոսի վերջին տասնօրյակին՝ իրականացնելով մեր առջև դրված կազմակերպական խնդիրները: Պարզապես նրանք այդ ընթացքում չպետք է տեսադաշտում տեսնեն իրենց ծնողներին: Դա միայն կխանգարի: Այդ ընթացքում անհրաժեշտ է՝

- ուսուցչի ծանոթությունը աշակերտների հետ,
- ծանոթություն դպրոցական կյանքին և կարգուկանոնին,
- ծանոթություն աշակերտների իրավունքներին և պարտականություններին,
- սովորեցնել ճիշտ նստել, ձեռք բարձրացնել, խոսելիս կամ պատասխանելիս անհրաժեշտության դեպքում կանգնել,
- մշակել բարձրաձայն և հստակ պատասխանելու կարողություն,
- սովորեցնել լսել ուսուցչի խոսքը և կատարել հանձնարարությունները,
- սովորեցնել լսել ընկերների պատասխանները և արձագանքել դրանց,
- սովորեցնել գրքից և գրենական պիտույքներից օգտվելու և դրանց նկատմամբ խնամքի կանոնները:

3. Դեռևս նախաայբբենական շրջանում մեծ տեղ պետք է տալ երեխաների հնչյունային լսողության զարգացմանը: Երաշխավորելի է այբբենարանում տեղ գտած բոլոր առարկայական նկարները բանավոր ենթարկել հնչյունային և տառային վերլուծության՝ սկսած սեպտեմբերի սկզբից: Փորձը ցույց է տվել, որ հոկտեմբերի վերջին եթե երեխաները կարողանան իրենց ոչ միայն անունները, այլև ազգանունները հնչյունային վերլուծության ենթարկել, նրանք կկարողանան նաև ճիշտ, սահուն, հասկանալով կարդալ նաև գրաճանաչության շրջանի համար նախատեսված բառերն ու բնագրերը: Այդ գործընթացը կնպաստի նաև սովորողների ուղղագրական գիտելիքների լավ իմացությանը:

4. Երեխաներն առանց դժվարության ընբռնում են առարկայի նկարը, որի տակ գծված է նրա գծապատկերը, սակայն չեն ընկալում այն: Ընթերցում են ոչ թե գծապատկերը, այլ ասում են միայն ծանոթ առարկայի անվանումը, ինչն անհանդուրժելի է:



Ուսուցիչը պետք է հետևողական լինի, որ աշակերտը ցուցամատը դնի ոչ թե **կարկինի** նկարի, այլ՝ նրա տակ նկարված գծապատկերի վրա:



5. Գրավոր խոսքի զարգացման համար այդ շրջանում ուսուցիչը առաջինից չորրորդ տեղադրության տառամասնիկները (տես՝ ներքոբերյալ նկարը) աշակերտներին պետք է սովորեցնի այնպես, որ նրանք հասկանան տառամասնիկների չափը, ձևը, դիրքը և իրենք էլ պատմեն դրանց չափի, ձևի, դիրքի մասին, որպեսզի տառերը գրելու ժամանակ կարողանան առանց դժվարության կողմնորոշվել: Վայելուչ գրելու կարողությունների զարգացման համար մեր դիտարկումները վկայում են, որ ուսուցիչը չպետք է գրատախտակին կամ ինքնուրույն աշխատանքի համար նախատեսված թղթում (եթե թուղթը մայրենիի տետրի թուղթ չէ, իսկ մաթեմատիկայի տետրի թղթում ընդհանրապես չի կարելի) առանց տող գծելու գրի գոնե մեկ տառ: Այդ գործընթացը պետք է տևի նույնիսկ մինչև երկրորդ դասարանի վերջը: Այս հանգամանքը պայմանավորված է 6 տարեկան երեխաների կազմաբնախոսական տվյալներով



6. Թեմատիկ նկար-պատմությունների ուսուցման ժամանակ երեխաներն ընկալում են նկար-առարկաները և թվարկում դրանք: Երաշխավորելի է, որ ուսուցիչն առաջարկի աշակերտներին, որ նրանք յուրաքանչյուր նկար- առարկայի ավելացնեն նաև նրանց հնչպիսի լինելը, դրանցով կազմեն նախադասություն. դա ավելի կհարստացնի աշակերտի ակտիվ բառապաշարը և կհեշտացնի հետագայում «Հատկանիշ ցույց տվող բառ» և «Նախադասություն» հասկացությունների ուսուցումը:

7. Այբբենարանում ներկայացված է պայմանական նշանների մի համակարգ, որի համառոտ բանալին տրված է դասագրքերի վերջում: Ուսուցիչը պետք է նախօրոք ծանոթանա այդ համակարգին, որպեսզի դասագրքով աշխատելու ընթացքում այդ նշանները ծանոթացնի երեխաներին, քանզի դրանց գիտակցումից է կախված աշակերտների ակտիվությունը: Պայմանական նշանների կիրառումը այբբենարանում նորություն է: Հայ դպրոցի իրականության մեջ գործածված որևէ այբբենարանում մենք չենք հանդիպել պայմանական նշանների. սովորաբար այբբենարանների հեղինակներն առաջնորդվել են այն սկզբունքով, որ այբբենարանը պիտի մատչելի լինի երեխաներին, այնքան պարզ, որ նրանք առանց մեծերի օգնության, ինքնուրույն կարողանան աշխատել դասագրքով: Այնուամենայնիվ, թեև այբբենարաններում տեղ գտած պայմանական նշաններով աշխատելու համար ուսուցիչները հաճախ օգնում են աշակերտներին՝ հաճախակի բացատրելով և հիշեցնելով դրանց իմաստը, պրակտիկան ցույց է տալիս, որ երեխաները յուրացնում են դրանց նպատակադրումները, առաջնորդվում դրանցով: Միաժամանակ, մեր դասալսումների ժամանակ կատարած ուսումնասիրություններից եկանք այն համոզման, որ պայմանական նշաններով առաջնորդվելու կարողության ձևավորման գործընթացում ձևավորվում են և զարգանում երեխաների վերացական մտածողությունն ու երևակայությունը: Աշակերտը պետք է ոչ միայն ճանաչի դասագրքում նշված պայմանական նշանները, այլև յուրաքանչյուր նշանի պահանջը ասելուց հետո նոր միայն կարդա տրվածը. օրինակ՝ աշակերտը պետք է ասի նախ պահանջը ըստ պայմանական նշանի՝ «Աջ ու ձախ», հետո մեկնաբանի՝ հինգ. գ-ն ավելացել է աջից, գահ. գ-ն ավելացել է ձախից, գայլ. գ-ն ավելացել է ձախից, գարի. գ-ն ավելացել է ձախից, սագ. գ-ն ավելացել է աջից. («Այբբենարան», էջ 115) և այլն: Այս գործընթացը կնպաստի նաև աշակերտների մոտ մաթեմատիկայից առաջադրանքի պահանջը հեշտությամբ ընկալելուն և ինքնուրույն կատարելուն:

8. Մեր մանկավարժական պրակտիկան համոզում է, որ, աշխատելով վանկային մեթոդով, հեշտանում է երեխաների կարդալու կարողությունների ձևավորման գործընթացը. երեխաներն ավելի քիչ ջանքերով, ավելի մեծ հաջողություններ էին ձեռք բերում: Նախ սովորեցնում էինք գիտակցորեն կարդալ ձայնավորը՝ ձայնավոր+բաղաձայն, հետո՝ բաղաձայն+ձայնավոր տառակապակցությունները:

րա	*րու*	*րի*	*ար*	*ուր*	*իր*
կա	*կու*	*կի*	*ակ*	*ուկ*	*իկ*
սա	*սու*	*սի*	*աս*	*ուս*	*իս*
տա	*տու*	*տի*	*ատ*	*ուտ*	*իտ*

Ու այդպես՝ ամեն նոր տառ անցնելիս աշակերտներն արդեն գիտեին, թե ինչ պետք է սովորեն: Յուրաքանչյուր աշակերտի հետ մյուսները մտքում կրկնելով՝ բառի մասնիկների ձևն ու կառուցվածքը դարձնում էինք տեսողական մտապատկերներ: Այդ գործընթացը կարելի է իրականացնել միայն գրաճանաչության այբբենական շրջանի առաջինից երկրորդ շաբաթներում :

Պրակտիկան ցույց է տալիս, որ մաքուր վանկային մեթոդով կարդալ սովորեցնելը խոչընդոտում է հասկանալով կարդալու կարողության ձևավորմանը:

Գրաճանաչության այբբենական շրջանի երկրորդ տասնօրյակում խիստ անհրաժեշտություն է բառակազմական և վանկակազմական աշխատանքներ պատկերազարդ այբուբենից: Ուսուցիչն անխոս պատկերազարդ այբուբենից ցուցափայտով հերթով ցույց է տալիս այն տառախումբը, որը բառ է կազմում, իսկ աշակերտները ասում են բառը :

Այսպիսին է նաև նորածանոթ տառի ամրակայման, այն պարունակող բառերի և բառակապակցությունների կարդալու ուսուցման առաջին քայլերը: Դասի ընթացքում շարժական տառերի օգնությամբ բառեր կազմում և կարդում: Ընդ որում՝ հմուտ և գիտակ ուսուցիչներն ընտրում են և կազմել տալիս այբբենարանի տվյալ էջի այն բառերը, որոնք, նրանց կարծիքով, երեխաները դժվարությամբ կկարդան (դրանք հիմնականում բազմավանկ, բազմահնչյուն բառերն են): Նոր հնչյունը ուսուցանելուց հետո, երբ դասարանի մեծադիր տառադարանից (հետո նաև՝ անհատական տառադարաններից) հանվում են ուսուցանվող հնչյունի նախ՝ փոքրատառը, ապա՝ մեծատառը, սկսվում է նոր տառն ունեցող բառերը կարդալու աշխատանքը: Նախ կատարվում է բառի շուրջ հնչյունային վերլուծական-համադրական աշխատանք, հետո՝ երեխաները հանում են այդ հնչյուններին համապատասխանող շարժական տառերը, հաջորդաբար դասավորում, ստանում բառը և կարդում այն միանգամից: Ընթերցելու համար սկզբում առաջարկվում են երկհնչյուն, ապա՝ եռահնչյուն միավանկ ու երկվանկ բառեր, այնուհետև՝ բազմավանկ բառեր, բառակապակցություններ, նախադասություններ, ապա՝ կապակցված խոսք:

9. Մեր մանկավարժական պրակտիկ փորձն ու հատուկ նպատակով իրականացրած գրելու գործընթացի ուսումնասիրությունը մեզ բերեցին այն համոզման, որ տառագրության կարողության զարգացման համար առաջնությունը տալիս ենք <u>տառը գրել միանգամից</u>, ոչ թե «մասնատելով» օրինակ՝ Ր, ր: Այսպիսի ընթացքը համապատասխանում է ուսուցման մատչելիության սկզբունքին և օգնում է երեխաներին առանց դժվարության, առանց լարվածության (թե՛ հոգեկան, թե՛ մկանային) գրել բառերը ոչ թե անջատ-անջատ տառերով, այլ՝ միաձույլ:

10. Չսահմանափակվել միայն նախաայբբենական շրջանում նախադասության կամ բառի գծապատկերը կազմելով: Անհրաժեշտ է անպայման կազմել նաև այբբենարանի՝ մինչև վերջին էջերի բնագրերի գծապատկերները, այն էլ, ցանկալի է, գունային տարբերակումներով: Օրինակ՝ կարմիր գույնով ներկել միավանկ, կապույտով՝ երկվանկ, կանաչով՝ եռավանկ բառերը:

☞5

ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՈՒՍՈՒՑՉԻՆ

ԹԵՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԹԵՈՐԻԱՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱՆ

ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Մինչև առաջադրանքների կառուցվածքաբանության ուսումնասիրումը՝ նախ հասկանանք՝ ինչ է նշանակում թեստ: Թեստը ստանդարտ առաջադրանքների ամբողջություն է, որոնց կատարման արդյունքը չափում է, որոշում է փորձարկվողի գիտելիքները, ունակությունները և հմտությունը: Իսկ ո՞րն է թեստային առաջադրանքի նպատակը: Նպատակն է՝ փորձարկվողից ստանալ պատասխան, որի հիման վրա կարելի է հետևություն կատարել նրա գիտելիքների, ինտելեկտուալ ունակությունների, ընդունակությունների, պատկերացումների վերաբերյալ:

Հետևաբար, թեստերի մշակման գլխավոր պահանջներն են՝

ա) թեստի հուսալիությունը ճշգրտության (ճշտության) աստիճանն է, որով թեստը չափում է գիտելիքների մակարդակը,

բ) թեստի որակի ցուցանիշը թեստի ունակությունն է՝ չափել այն, ինչ պետք է չափվի ըստ էության;

Ընտրովի պատասխաններով թեստային առաջադրանքներ

մեկ ճիշտ պատասխանի ընտրությամբ առաջադրանքներ

մեկից ավելի ճիշտ պատասխանների ընտրությամբ առաջադրանքներ

Փակ տիպի (ՓՏ) առաջադրանքները նախատեսում են մի քանի պատասխանի պատրաստ տարբերակներ առաջադրված հարցին: Քննվողը պետք է ընտրի մեկ կամ մի քանի (կախված պահանջից) ճիշտ պատասխանի տարբերակներ: Սովորաբար պատասխանների սխալ տարբերակներն անվանում ենք դիստրակտոր:

ՓՏ առաջադրանքների հրահանգը (инструкция)՝ ընտրել ճիշտ պատասխանը, պատասխանների ճիշտ տարբերակը վերցնել շրջանակի մեջ, պատասխանների ձևաթղթում նշել X-ով և այլն:

Հիմնականում՝ կատարած մեկ ճիշտ առաջադրանքը (կամ քայլը) գնահատվում է մեկ միավոր, սխալը՝ 0:

Այս տիպի առաջադրանքների համար թեստաբանները և մանկավարժները առաջադրում են հետևյալ պահանջները.

1. առաջադրանքը պետք է համապատասխանի ծրագրային պահանջներին,

2. հրահանգը ձևով և բովանդակությամբ պետք է լինի համարժեք և բոլոր քննվողների համար նույնատիպ,

3. պատասխանների տարբերակները պետք է տեղավորել որոշակի կարգով.

ա) այբբենական,

բ) տողի երկարությամբ,

գ) փոքրից մեծ և հակառակը,

դ) պատմական (էվոլյուցիոն) հաջորդականությամբ,

ե) պատասխանների տարբերակները չպետք է պարունակեն այնպիսի ձևակերպումներ, ինչպիսիք են՝ բոլոր թվարկածները, բոլոր պնդումները ճիշտ են, թվարկվածներից ոչ մեկը և այլն,

զ) բոլոր կրկնվող բառերը պետք է պատասխանների տարբերակներից տեղափոխել առաջադրանքների բովանդակային մաս,

է) պատասխանների տարբերակներից (դիստրակտորներից) ոչ մեկը չպետք է լինի մասամբ ճիշտ, որը որոշակի լրացումներով կարող է լինել ճիշտ,

ը) քննվողի համար պատասխանների բոլոր տարբերակները պետք է լինեն հավասար գրավիչ,

թ) պատասխանի ճիշտ տարբերակի տեղը որոշվում է պատահականության սկզբունքով,

ժ) հարցի պատասխանը չպետք է կախված լինի նախորդ հարցերի պատասխաններից,

ի) պատասխանների տարբերակները չպետք է բխեն մեկը մյուսից:

ՓՏ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՄԱՍԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄԸ

Սովորաբար այն դժվարություններ չի առաջացնում թեստ կազմողների մոտ, սակայն այստեղ հնարավոր է երեք տիպի մոտեցում՝

1. առաջադրանքը հարցի ձևով (օրինակ 1)
2. պնդում (այսինքն՝ չավարտված նախադասություն)(օրինակ 2)
3. նախադասության տեսքով՝ բաց թողնված բառով (օրինակ 3)

Օրինակ 1.

Ո՞վ է ժառանգական փոփոխականության հոմոլոգիական շարքի օրենքի հեղինակը:

1. Վերնադսկին
2. Վավիլովը
3. Միչուրինը
4. Մեչնիկովը

Պնդման ձևով այն ավելի կարճ է:

Օրինակ 2.

Ժառանգական փոփոխականության հոմոլոգիական շարքի օրենքի հեղինակն է՝

1. Վերնադսկին
2. Վավիլովը
3. Միչուրինը
4. Մեչնիկովը

Օրինակ

Ենթաստամոքսային գեղձը արտազատում է ..... հորմոնը:

1. թիրոքսին
2. ադրենալին
3. ինսուլին
4. աճի հորմոն

Առաջադրանքների ձևակերպումը պնդման ձևով ավելի կարճ է ստացվում, քանի որ այն ոչ միայն հարցական բառեր չի պահանջում, այլ նաև՝ այլ լրացուցիչ բառեր:

Սակայն կան դեպքեր, երբ հարցը ավելի մատչելի ու կարճ է ստացվում հարցադրումով:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՊԱՅՄԱՆԻ (ՏԵՔՍՏԻ ՊԱՀԱՆՋԻ) ԿԱԶՄՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Թեստ կազմողի համար դժվար չէ բովանդակային ցանկացած տարրի վերաբերյալ հարց առաջադրել, հետո այն վերափոխել պնդման: հայտնի թեստաբան Վ. Ս. Ավանեսովի առաջադրած սկզբունքները հեշտացնում են այդ աշխատանքը:

1. Հետադարձության սկզբունք՝ հարցի և պատասխանի փոխանակումը տեղերով: Նման դեպքերում կարելի է ստանալ բովանդակությամբ, բարդությամբ, ձևով նման երկու և ավելի առաջադրանքներ.

Օրինակ 4, 5

…..4. Հողաթափիկ -ինֆուզորիայի շարժման օրգանոիդներ են՝

1. քարթիչները
2. մտրակները
3. պսևդոպոդիաները
4. պարապոդիաները

5. Թարթիչները բնորոշ են՝

1. հողաթափիկ - ինֆուզորիային
2. ամեոբային
3. կանաչ էվգլենային
4. մալարիայի պլազմոդիումին

2. Տարբերականության սկզբունք (ֆասետականություն)՝ բովանդակային մասում մեկ կամ մի քանի բառի փոխարինումը փոխում է առաջադրանքը՝ պահպանելով նրա բովանդակությունը և բարդության աստիճանը: Այս սկզբունքը հնարավորություն է տալիս զուգահեռ կազմել նույն առաջադրանքների մի քանի տարբերակներ (օրինակ 6):

Օրինակ 6.

Կաղամբի սպիտակաթիթեռը պատկանում է ***(կոլորադյան բզեզը, ճպուռները, մոծակը և այլն)***՝

1. երկթևանիներին
2. կարծրաթևավորներին
3. թաղանթաթևավորներին
4. թեփուկաթևավորներին

Մեկ ֆասետով(տարբերակով) առաջադրանքներից բացի, կան երկու և ավելի ֆասետներով առաջադրանքներ (օրինակ 8):

Օրինակ 8.

Մարդու սրտի **սիստոլի (դիաստոլի), փորոքների (նախասրտերի)** կծկումների տևողությունը (վ) ՝

1. 0,1
2. 0,3
3. 0,4
4. 0,8

Այստեղ կարելի է կազմել 4՝ հավասար բարդությամբ առաջադրանքներ:

Օրինակ 9.

Թռչունների (կաթնասունների, մարդու, պրիմատների, զույգամրակավորների) արյան շրջանառության **մեծ (փոքր)** շրջանը **սկսվում է (ավարտվում է)**՝

1. ձախ փորոքում
2. աջ փորոքում
3. ձախ նախասրտում
4. աջ նախասրտում

Այստեղ տարբերականության սկզբունքը հնարավորություն է տալիս կազմել հավասար բազմաթիվ առաջադրանքներ (2*5*2)= 20

Շատ տարածված է նկարների օգտագործումը առաջադրանքում: Բովանդակային մասում պետք է նկարի հետ մեկտեղ ճիշտ ձևակերպել հարցը և համապատասխան նշումները կատարել նկարի վրա (օրինակ 10):

Օրինակ 10.

Բ - տարրով նշված տեսողական վերլուծիչի մասն իրականացնում է՝



1. աչքի սնուցումը
2. լույսի ընկալումը
3. լույսի ճառագայթի բեկումը
4. մեխանիկական վնասվածքների ապահովումը

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

ՓՏ առաջադրանքներ կազմելիս հիմնական բարդությունը ճշմարտանման պատասխանների տարբերակների (դիստրակտորների) ընտրությունն է: ՓՏ առաջադրանքների բովանդակային մասը պետք է այնպես ձևակերպել, որպեսզի քննվողը հարցն ընթերցելուց հետո կարողանա ինքնուրույն ձևակերպել պատասխանը՝ մինչև պատասխանների տարբերակներին ծանոթանալը, որից հետո արդեն ընտրի հավանական պատասխանը: Օրինակ՝ թեստաբան Չելշկովան խորհուրդ է տալիս ճշմարտանման դիստրակտորների ընտրության համար օգտագործել աշակերտներին. առաջադրել դրանց պատասխանների տարբերակների չավարտված ցանկ կամ առաջադրանքներ հարցի ձևով և որպես դիստրակտոր օգտագործել աշակերտների թույլ տված սխալները:

Արդյունքում, ճիշտ կազմված թեստային առաջադրանքներում իմացող աշակերտն ընտրում է ճիշտ պատասխանը, չիմացողը նույն հավանականությամբ ցանկացած պատասխան: Եթե հնարավոր չէ գտնել ճշմարտանման դիստրակտոր, ապա պետք է հրաժարվել նման առաջադրանքից: Որպես դիստրակտոր՝ չի թույլատրվում օգտագործել «չգիտեմ» պատասխանը, քանի որ այն մեծացնում է պատահականության հավանականությունը:

Դիստրակտորների քանակը թեստաբանության մեջ վիճաբանելի հարց է: Շատերը համարում են, որ երկու-երեք պատասխաններով փակ տիպի առաջադրանքները արդյունավետ չեն: Ճիշտ պատասխանի ընտրության պատահականության սկզբունքը քչանում է դիստրակտորների քանակի ավելացմամբ, սակայն 5-7 դիստրակտոր գտնելը դժվարություններ է առաջացնում:

ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ

Բացի դրանից, քննվողները շատ ժամանակ են կորցնում առաջադրանքների կատարման համար, որը հակասում է թեստաբանության առավելության սկզբունքին (ժամանակի տնտեսում): Կենսաբանության մեջ ՓՏ առաջադրանքներում երաշխավորվում է օգտագործել 4-5 դիստրակտոր. ճիշտ ընտրության պատահականությանը կազմում է 20-25%:

Պատասխանների տարբերակների ընտրության ժամանակ հաճախակի հանդիպող սխալներից է ոչ նույնատիպ շարքին պատկանող հասկացությունների օգտագործումը (օրինակ 13):

13. Բակտերիաների հիմնական առանձնահատկությունը՝

1. կորիզանյութը առաձնացված է ցիտոպլազմայից
2. չունի թաղանթ
3. բացակայում են ռիբոսոմները
4. բջիջները փոքր չափսերի են

Այս օրինակում 1, 2, 3 պատասխանի տարբերակները պատասխանում են «ինչպես է կազմված բջիջը», 4-րդը՝ «ինչպիսի չափսեր ունի բջիջը»:

ԲԱԶՄԱԿԻ ՃԻՇՏ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՄԲ ԹԱ

Այսպիսի թեստային առաջադրանքի հրահանգում կարող է նշվել կամ չնշվել ճիշտ պատասխանների տարբերակների քանակը:

Օրինակ՝

Հրահանգ՝ ընտրել բոլոր ճիշտ պատասխանները (առաջարկվածներից երկուսը, երեքը):

Տվյալ առաջադրանքը կարող է գնահատվել երկու ձևով:

Առաջին դեպքում օգտագործվում է դիխոտոմիկ գնահատական, ճիշտ կատարելու դեպքում գնահատվում է մեկ միավոր, սխալի դեպքում՝ 0: Որպես ճիշտ պատասխան՝ ենթադրվում է բոլոր ճիշտ տարբերակների ընտրությունն առանց բացառության, անգամ մեկ սխալի դեպքում գնահատվում է 0:

Երկրորդ դեպքում առաջադրանքները համարվում են պոլիտոմիկ և ենթադրում են (թույլատրում են) պատասխանի մի քանի տարբերակ (կատեգորիա)՝ յուրաքանչյուրը գնահատվում է տարբեր ձևով: Օրինակ՝ կարելի է լրիվ ճիշտ պատասխանը գնահատել 2 միավոր, մասամբ ճիշտ պատասխանը՝ 1 միավոր, սխալ պատասխանը՝ 0 միավոր: Կարելի է նաև 1 միավոր գնահատել յուրաքանչյուր ճիշտ քայլ: Հիմնականում երաշխավորվում է օգտագործել այս մեթոդը, որը թույլ է տալիս աշակերտին վաստակել գոնե 1 միավոր:

Ցանկալի է, որ պատասխանների տարբերակների քանակը լինի 5-14: Ճիշտ պատասխանների քանակը տատանվում է մեկից մինչև բոլորը: Սակայն ցանկալի է, որ դիստրակտորների քանակը լինի ավելի շատ, քան ճիշտ պատասխանները:

Թեմայի հղումը՝ Դյափլով Կ. Դ. (շարունակելի)

Արմինե ՍԱՐԳՍՅԱՆ
ԼՂՀ ԳԹԿ տնօրենի տեղակալ

ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ

ԼՂՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմը ջերմորեն շնորհավորում է Վալերի Սահակյանին՝ ծննդյան 65-ամյակի առթիվ:

Կյանքի ավելի քան 40 տարիները նա նվիրել է սիրած աշխատանքին: Դրանք համառ աշխատանքի ոչ դյուրին, բայց և բավականություն պատճառող տարիներ էին: Նա աշխատել է որպես ուսուցիչ, քաղժողկրթբաժնի տեսուչ, կուսակցության քաղկոմի հրահանգիչ, բաժնի վարիչ, 22 տարի ղեկավարել է Ստեփանակերտի հ.9 դպրոցը, երեք տարի՝ հ.8 ավագ դպրոցը:

2012 թվականից Վ. Սահակյանը կրթության և գիտության նախարարության կրթության պետական տեսչության բաժնի վարիչն է և իր մասնագիտական գիտելիքները, մաթեմատիկայի դասավանդման մեթոդները փոխանցում է հանրապետության ուսուցիչներին:

Հարգարժան Վալերի Սամվելի, շնորհավորելով հոբելյանի առթիվ՝ մաղթում ենք քաջառողջություն, երջանկություն, ցանկանում, որ միշտ շրջապատված լինեք Ձեր մտերիմներով , զավակներով, թոռներով, հարազատներով, գործընկերներով:

ԼՂՀ ԿԳՆ աշխատակազմ

ՄԵԹՈԴԱԿԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԳՐԱՃԱՆԱՉՈՒԹՅՈՒՆԻՑ

3 ☜

11. Նոր նյութի ուսուցման ժամանակ տառը ճանաչել տալուց հետո աշակերտն ինքը պետք է նոր նյութը փորձի ընթերցել, իհարկե, ուսուցչի ուղղորդմամբ.

12. Դասը մեխանիկորեն սերտելուց խուսափելու համար մեծ տեղ պետք է տալ ընտրովի ընթերցանությանը. կարդալ երկրորդ բառաշարքի առաջին բառի վերջին վանկը, կամ՝ կարդալ երրորդ բառաշարքի երկրորդ բառի առաջին ձայնավորը, կամ՝ կարդալ բնագրի առաջին նախադասության երկրորդ բառը, երրորդ նախադասության երկրորդ բառը, չորրորդ նախադասության վերջին բառը և այլն:

13. Անծանոթ բնագրերի ընթերցման ժամանակ կիրառել ուղղորդված ընթերցանության մեթոդը՝ ավելացնելով՝ յուրաքանչյուր մտքի ավարտից հետո առաջարկել ասել բանալի բառեր, դրանցից մեկը ընտրել որպես բնագրի պլանի կետ (ցանկալի է ուղղագրական արժեք ունեցող կամ նոր բառ լինի, և աշակերտներն էլ իրենք տառային վերլուծությամբ «թելադրեն» ուսուցչին): Իսկ բնագրի կարդալուց (աշակերտի կողմից), բանալի բառերով պլանը կազմելուց հետո առաջարկել այդ բառերով կազմել նախադասություններ՝ բնագրի շուրջ: Դրանից հետո ուսուցիչն իր կենդանի ընթերցանությամբ աշակերտներին ուսուցանում է սահուն, արտահայտիչ և արագ կարդալու կարողություններ: Նոր միայն կարելի է անդրադառնալ բնագրին կից նկարների մեկնաբանություններին: Սկզբում սովորելով գեղեցիկ խոսքը, աշակերտն արդեն կկարողանա նկարի երևակայական մասը ոչ միայն ընկալել, այլև այն ներկայացնել ճիշտ ոճով:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ուսուցիչների և ծնողների մեծամասնությունը պահանջում է երեխաներից շատ կարդալ (10 անգամ նվազագույնը): Մեր կարծիքով՝ պատճառներից մեկը դա է, որ երեխաները չեն սիրում ընթերցել: Բացի դրանից, դա սերտողական հմտություններն է զարգացնում նրանց մոտ, նաև մաթեմատիկայից երեխաները չեն հասկանում առաջադրանքի պահանջը և առանց որևէ մեկի օժանդակության չեն կարողանում կատարել այն: Երեխաները պետք է ոչ թե նույն դասը շատ կարդան, այլ պետք է հասկանալով կարդան, որպեսզի շատ բնագրեր կարդան:

14. Հետայբբենական շրջանում աշակերտները պետք է ունենան լավ զարգացած հնչյունային լսողություն, որպեսզի տարեվերջին նրանք կարողանան գրատախտակին ինքնաթելադրությամբ գրել «Մայրենի 1» դասագրքի չափածո ստեղծագործություններից որևէ մեկը և կատարել ինքնաստուգում: Ուսումնասիրություններն ու իրականացրած մշտադիտարկումները հնարավորություն են ընձեռել եզրահանգելու, որ այդ ինքնաստուգման ժամանակ աշակերտը չպետք է թույլ տա հինգից շատ սխալ: Այլապես նրանք կդժվարանան երկրորդ դասարանում պահանջվող ձևով կարդալ ու գրել:

Աշխատանքի բերումով երկրորդից չորրորդ դասարաններում մայրենիից և մաթեմատիկայից պարբերաբար գրավոր աշխատանքներ ենք տալիս: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ երկրորդ դասարաններում բարձր են մաթեմատիկայի և նույնիսկ խիստ ցածր՝ մայրենիի գրավոր աշխատանքների արդյունքները, իսկ 4-րդ դասարաններում՝ (նաև՝ նույն ուսուցիչների և նույն դասարանի աշակերտների մոտ) ընդհակառակը. ցածր են մաթեմատիկայի և բարձր մայրենիի գրավոր աշխատանքների արդյունքները: Փաստերը վկայում են այն մասին, որ աշակերտների մեծամասնությունը (նկատի չունենք ներառված երեխաներին) 7 տարեկանում կարողանում է կրթական առարկայական չափորոշիչներին համապատասխան, այն է՝ թվարկություն, մեծություններ, երկրաչափություն և տեքստային խնդիրներ, ապահովել որակական գնահատական. «7-8-9-10 միավոր», իսկ 10 տարեկանում՝ ոչ: Եվ ընդհակառակը՝ 7 տարեկանում չեն կարողանում առաջադրանքով թելադրությունից որակական գնահատական ապահովել, իսկ 10 տարեկանում մասամբ են կարողանում: Եթե երեխան 7 տարեկանում կարողանում է հասկանալով բաղադրյալ խնդիր լուծել (հասկանում է, որովհետև ծավալուն չէ, «աչքը չի վախենում»), ինչու չպիտի կարողանա դա անել նաև 10 տարեկանում: Հասկանալի է՝ մի քիչ ծավալով խնդիրները չեն հասկանում, որովհետև նրանց հասկանալով և հաճույքով կարդալու կարողությունները զարգացած չեն:

Մեր կարծիքով՝ 7 տարեկանում (մայրենիի արդյունքները լավ չեն լինում, որովհետև աշակերտների մեծամասնությունը չունի զարգացած հնչյունային լսողություն. մանավանդ բազմավանկ բառերում տառեր, երբեմն վանկեր է բաց թողնում: Ճիշտ գրել անծանոթ տեքստը՝ նշանակում է՝ ճիշտ կարդալ անծանոթ նյութը: Գրաճանաչության պատմությունն ու պրակտիկան արդեն ապացուցել են, որ գրաճանաչությունն արդյունավետ է, երբ կարդալու ու գրելու կարողությունները ձևավորվում են համատեղ, զուգորդված:

15. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 6 տարեկան երեխան մի գործունեությունից մյուս գործունեությանը չի կարող սահուն կերպով անցնել, երաշխավորվում է՝ դասագործընթացում անցկացվող ֆիզկուլտդադարները, դիդակտիկ խաղերը, քարտային աշխատանքները կազմակերպել դասի բովանդակության շուրջ: Օրինակ՝ ուսուցչուհին **«Տ հնչյուն-տառի» ուսուցման կշռադատման փուլում** առաջարկում է.

- ասում եմ բառեր. երբ **տ հնչյունը** լսվի բառասկզբում՝ կկանգնեք, երբ՝ բառամիջում, կպտտեք գլուխը, իսկ երբ՝ բառավերջում, կծափահարեք:

16. 6 տարեկան երեխաների մեծամասնությունը հնչյուն-տառի ուսուցման ժամանակ բառաշարքերի բառերը կարդում է որպես բառապատկերներ, մեխանիկորեն՝ առանց հասկանալու իմաստը: Մեր դասալսումներից ու դիտարկումներից ելնելով՝ առաջարկում ենք ուսուցիչներին՝ բառերը կարդալ հարցնելուց հետո յուրաքանչյուր աշակերտից անպայման պահանջել դրանցով կազմել բառակապակցություններ կամ նախադասություններ:

Իհարկե, ուսուցիչները այդ բառերից որոշները բացատրում են՝ ցույց տալով համապատասխան առարկան:

17. Հասկանալով կարդալու կարողությունները զարգացնելու համար ոչ պակաս կարևորություն ունի բնագրերին կից նկարների մեկնաբանությունները: Որոշ ուսուցիչներ այդ նկարները մեկնաբանում են նախքան բնագրի ընթերցումը: Մեր ուսումնասիրությունները ցույց են տվել, որ այդպիսի ուսուցման ժամանակ աշակերտներին գրավում են միայն այնպիսի ստեղծագործությունները, որոնք ունեն նկարազարդումներ: Իսկ շատ հաճախ էլ, զննելով այդ նկարազարդումը, մասամբ ընկալում են իմաստը, և շրջում թերթը: Մեր կարծիքով, նրանց խանգարում է նաև կարդալու որակական հատկանիշներին (ճիշտ, սահուն, հասկանալով) համապատասխան կարողություններ չունենալը : Ավելի լավ չէ՞ր լինի, նախ՝ ուղղորդված ընթերցանության մեթոդի միջոցով կարդալ բնագիրը, հետո անցնել բնագրին կից նկարի ուսումնասիրմանը: Դիտարկումները ցույց են տվել, որ այդպիսի ուսուցման ժամանակ աշակերտները ավելի մանրամասն են մեկնաբանում նկարը՝ ընկալելով նրա երևակայական բոլոր կողմերը :

18. Առաջին իսկ դասարանից պետք է զարգացնել սովորողների գործնական կարողությունները՝ նրանց հանձնարարելով հետևյալ վարժությունները.

- շարունակի՛ր անավարտ պատմվածքը կամ հեքիաթը,
- հորինի՛ր մի պատմվածք որևէ հերոսի անունից,
- որոշի՛ր, թե որքան գործողություններ կարելի է կատարել որևէ առարկայի հետ, օրինակ՝ կավճի, մատիտի, փայտի, թերթի,
- որևէ առարկայի համար անվանի՛ր, որքան հնարավոր է, շատ հատկանիշներ և այլն:

Գործնական վարժությունները կատարելիս պահաջվում է տարբեր վարկածների առաջքաշման նպատակով մտածողության ճկունություն և յուրօրինակություն, ինչպես նաև այնպիսի անձնային որակներ, ինչպիսիք են սկզբունքայնությունը, ազատ ինքնարտահայտումը և այլն [15, էջ 9]:

19. Բարբառախոսությունը և դրանից բխող լեզվական-արտասանական թերությունները ևս լրջորեն խանգարում են գրաճանաչության ուսուցմանը և բացասականորեն ազդում խոսքի մշակույթի վրա:

Պայմանավորված Արցախի բարբառի և հնչյունային վերարտադրման ինքնատիպությամբ, մեր ուսումնասիրությունները պարզել են, որ նախ՝ երեխաների լեզուն պետք է «բացել»: Ուսուցչի կենդանի խոսքը յուրաքանչյուր վայրկյանի, նրա հետևողականությունը՝ աշակերտների խոսքի հղկման աշխատանքներին կարևոր նախադրյալներ են 6 տարեկան երեխաների կարդալու կարողությունների ձևավորման գործընթացում :

Բացի ուսուցչի խոսքից, մենք կարևորում ենք նաև նկար-առարկաների, բառաշարքերի բառերի ճիշտ արտասանությունը, շեշտերի ճիշտ տեղադրությունը. օրինակ՝ *աղվե՛ս, ոչ թե ա՛ղվես, աքլո՛ր, շեփո՛ր, պարա՛ն* և այլն :

Կարևորում ենք նաև նախաայբբենական շրջանում, գրական ունկնդրման, տառաճանաչության ժամերին աշակերտներին պարբերաբար սովորեցնել ասմունքել, պատմել :

Անա ՊԵՏՐՈՍՅԱՆ
ԼՂՀ ԿԳՆ ԿՊՏ տեսուչ
«Մեսրոպ Մաշտոց»
համալսարանի դասախոս

ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔ

ՄԻՇՏ ԵՌԱՆԴՈՒՆ ՈՒ ՆՎԻՐՎԱԾ

Երջանիկ է այն մարդը, ով հետ նայելուց իր անցած տարիների շքերթում տեսնում է ժողովրդի լուսավորությունը, սերունդներին ընծայած իր սրտի թրթիռներն ու հոգու երանգները:

Այդ երջանիկներից է Հադրութի Մ. Մանվելյանի անվան միջնակարգ դպրոցի ռուսաց լեզվի և գրականության ուսուցչուհի Սուսաննա Միրզոյանը:

Լրանում է հետաքրքիր, հախուռն բնավորությամբ, միշտ պրպտող ու անհանգիստ, դժվարություններից երբեք չերկնչող, անսպառ եռանդի ու հավատի տեր մեր գործընկերոջ՝ Սուսաննա Միրզոյանի ծննդյան 50-ամյակը:

Արցախ աշխարհի կրթական համակարգի շրջանակներում բարի համբավ ձեռք բերած մանկավարժներից է Սուսաննան, որի ծանրակշիռ վաստակի մասին կարելի է համարձակ արտահայտվել: Շնորհաշատ ուսուցչուհին տարիներ շարունակ անխոնջ սերմնացանի պես հոգու շռայլ լույսն ու կրակը, հարուստ գիտելիքները մեծագույն սիրով հաղորդել է իր սաներին՝ ռուսերենի հրաշք աշխարհի նկատմամբ պայծառ սեր ու հետաքրքրություն սերմանելով նրանց ուսումնատենչ հոգիներում:

Սուսաննա Միրզոյանը երկու անգամ մասնակցել է «Տարվա լավագույն ուսուցիչ» հանրապետական մրցույթին, պար-գևատրվել անվանակարգում հաղթելու համար: Դա պատահական չէ. շնորհիվ իր եռանդի, նվիրվածության և առարկայի խոր իմացության՝ նա հասավ այդ բարձունքին:

Նրա համար ամեն օր ռուսերենի դասը սկսվում է իր սաներին ուղղված սիրագորով ժպիտ-ողջույնով, որը ոգևորում է նրանց:

Դաս…իմաստալից ու խորունկ, ոոպեները՝ հագեցված ու մանկավարժորեն հիմնավորված, իմաստնության թելերով կապված աշակերտների հոգևոր աշխարհի բոլոր անկյուններին:

Բոլոր աշակերտների համար Սուսաննա Միրզոյանը գիտելիքների անսպառ շտեմարան է, հույզերի հորդաբուխ աղբյուր և ամենագլխավորը՝ մեծ հեղինակություն: Սուսաննան նաև նրբանկատ հոգեբան է: Խստապահանջությունը մշտապես զուգակցում է մայրական հոգատարության հետ՝ կիրառելով ուսուցման և դաստիարակության տարբեր հնարներ ու ձևեր:

Մեր հարգարժա'ն գործընկեր, շնորհավորում ենք քո ծննդյան 50-ամյակը: Ցանկանալով նորանոր բարձունքներ մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության գործում՝ մաղթում ենք աստղաբույլ երջանկություն, հոգեկան խաղաղություն և բազում տարիների բեղմնավոր աշխատանք:

Թող հաջողությունները լինեն ուղեկիցը քո, մարդկային վեհ արժանիքներով ամբարված հարուստ քո հոգու՝ դեռ երկար տարիներ սաներիդ բաշխելու, տալու, շռայլելու համար:

Հադրութի Մ. Մանվելյանի անվան միջն. դպրոցի մանկավարժական կոլեկտիվ

ՄԱՅՐԵՆԻԻ ԱՆԽՈՆՋ ՄՇԱԿԸ

Հիրավի լույսի սերմնացաններ են ուսուցիչները, մատաղ հոգիների մշակներ, ովքեր անմնացորդ նվիրվում են սերունդների հոգևոր հարստության և առողջ հասարակության կերտման հայրենանվեր գործին:

Մեծ ակնածանքով կարելի է խոսել այդ նվիրյալներից մեկի՝ ստեղծագործ և անխոնջ մշակ Զոյա Խաչատրյանի մասին:

Ծնվել է 1954թ. օգոստոսի 16-ին, Ստեփանակերտ քաղաքում: 1971թ. գերազանց գնահատականներով ավարտել է տեղի հ.2 միջնակարգ դպրոցը: 1976թ. ավարտելով Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի մաթեմատիկայի ֆակուլտետը՝ երիտասարդ, ավյունով լի մանկավարժը աշխատանքի անցավ հարազատ դպրոցում՝ որպես մաթեմատիկայի ուսուցիչ:

1978-ից առայսօր աշխատում է հարազատ կրթօջախում՝ որպես դասվար: Համակողմանի զարգացած հմուտ մանկավարժը տարիներ շարունակ մատաղ հոգիներում անմար փարոսի պես վառեց մեսրոպյան տառերով ճառագված մեր ինքնության ջահը, որպես անմար կերոն լուսավորեց նրանց ճանապարհը: Սիրելի ուսուցչուհու վեհ կեցվածքը, գեղեցիկ խոսքը, նպատակասլացությունը, ազնվությունն ու անաչառությունը բազում սերունդների ուղղորդել են դեպի մեծ կյանք: Նրա սաներն այսօր հայտնի բժիշկներ են, մանկավարժներ, ճարտարապետներ, հասարակության մեջ հարգված մարդիկ:

Զ. Խաչատրյանն իր իմաստուն խորհուրդներով ամուր կանգնած է իրեն անչափ հարգող ծնողական հասարակության կողքին: Նա իր սաների մեջ սերմանել է նաև անհուն հայրենասիրություն, նվիրվածություն և հարգանք հայրենի հողի և հայրենակցի նկատմամբ:

Աշխատանքային 38 տարիների ընթացքում նվիրյալը ստանձնել է տարբեր պաշտոններ՝ տարրական դասարանների փոխտնօրեն (1989թ.), արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների գծով փոխտնօրեն(1992-1998թթ.), քաղաքային մեթոդմիավորման նախագահ(2009-2013թթ): Իրեն վստահված յուրաքանչյուր գործ կատարել է ամենայն նվիրումով, մեծ պատասխանատվությամբ ու անաչառությամբ:

Զ. Խաչատրյանը, խորությամբ տիրապետելով իր մասնագիտությանը, կարողանում է զուգորդել ուսուցման ավանդական և ժամանակակից մեթոդները, սատարում է սկսնակ դասվարներին՝ որպես բարի խորհրդատու, ավագ ընկեր և բոլորի բարին կամեցող:

Այսօր մեր սիրելի գործընկերը 60 տարեկան է: Սրտանց շնորհավորում ենք հոբելյանդ, ցանկանում նոր ուժ ու եռանդ, պողպատյա առողջություն, դարաբաղյան երկարակեցություն, բերկրալից պահեր, կանաչ ճանապարհ ու անբիծ երկինք:

Թող արցախցի սևաչ մանուկները Քեզ սպասեն մեծ սիրով ու սրտի թրթիռով:

Ստեփանակերտի Ա. Ղուլյանի անվան հ. 2 հիմնական դպրոցի մանկավարժական կոլեկտիվ

ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԽՈՍՔ՝ ՍԻՐԵԼԻ ՈՒՍՈՒՑՉԻՆ

Դպրոցում սովորելու տարիներին բոլորն էլ սիրելի ուսուցիչ են ունենում, որի արարքները, վարքագիծն ու վերաբերմունքը միշտ օրինակ են հանդիսանում և ուղեցույց՝ կյանքի ընթացքում:

Ես սովորել և ավարտել եմ Խնապատի միջնակարգ դպրոցը, որը միշտ էլ փայլել է լավագույն կադրերով՝ թողարկելով նմանատիպ աշակերտներ, որոնցից շատերն այսօր կարևոր մարդիկ են՝ հասարակության համար պիտանի:

Խնապատի միջնակարգ դպրոցի ողջ ուսուցչական կոլեկտիվը տնօրենի՝ մեծարգո Զ. Բեգլարյանի գլխավորությամբ իրենց մեծ ներդրումն են ունեցել իմ՝ որպես մարդու և մասնագետի ձևավորման և կայացման գործում:

Սակայն հիմա ես ուզում եմ խոսել մի մարդու մասին, որը մեր դպրոցի լավագույն ուսուցիչներից է. ռուսաց լեզվի և գրականության ուսուցչուհի Զուլիետա Խորենովնա:

Երբ առաջին անգամ նա մտավ դասարան, ես մեծ ջերմություն ու կրակ զգացի նրա մեջ, որն անմիջապես ինձ փոխանցվեց և երբեք չմարեց, այլ տարիների հետ ավելի բոցավառվեց և ջերմացրեց իմ սիրտը: Նա չափազանց բարի, նվիրված անձնավորություն է, լավ ուսուցչուհի, որից շատ բան կարելի է սովորել:

Արդեն 25 տարի է՝ ավարտել եմ հայրենի գյուղիս դպրոցը, բայց առ այսօր իմ աչքի առաջ է նրա բարի դեմքը, ժպիտը և քնքշանքը:

Հիմա ես աշխատում եմ ՀՀ Արարատի մարզի Նորաբացի Մ. Ապելյանի անվան միջնակարգ դպրոցում՝ որպես դասվար, արդեն 21 տարի, բայց միշտ կարոտով եմ հիշում իմ դպրոցը, իմ սիրելի ուսուցչուհուն:

Սիրելի Զուլիետա Խորենովնա, ցանկանում եմ նաև շնորհավորել Ձեր ծննդյան օրը, մաղթել ամուր առողջություն, երկար տարիներ կյանք, անսպառ եռանդ:

Ընդմիշտ Ձեր աշակերտ՝
Մանուշակ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ

Մանկավարժի մտորումներ

ԻՆՉՊԵՍ ՀԱՄՆԵԼ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ

Ընդհանրապես հիմա ավելի շատ է արծարծվում մատաղ սերնդի կրթության և դաստիարակության գործում ավելի մեծ ջանքեր ներդնելու անհրաժեշտության մասին: Թերթերում և լրատվական այլ միջոցներում եթե ոչ պարբերաբար, ապա հաճախակի նշվում է դպրոցներում մատաղ սերնդի զարգացման գործընթացը բարձր մակարդակի հասցնելու պահանջը: Այսինքն՝ մասնավորապես մանկավարժներին է վերաբերվում այս կոչը: Բայց կարելի է նաև հրատապություն ունեցող խնդրին մոտենալ հակառակ կողմից՝ լուծման եզրեր փնտրել նաև հենց մատաղ սերնդի շրջանում:

Դիցուք, ուսուցիչը շատ է հետամուտ աշակերտի դաստիարակության և կրթության մակարդակը ամուր հիմքերի վրա դնելու: Իսկ եթե աշակերտն ինքը չի ընդառաջում ուսուցչի ջանքերի՞ն: Իսկ եթե աշակերտի դաստիարակության գործում անմասն է մնում ոչ պակաս կարևոր մի գործոն՝ ծնողի մասնակցությու՞նը: Չպետք է կրթության ոլորտում, դպրոցներում առկա խնդիրների լուծումը թողնել միայն ուսուցչի խղճին: Դաստիարակությունը, որը շատ դժվար ու ջանքեր պահանջող գործընթաց է, պետք է իրականացվի նախ աշակերտի ընտանիքում՝ նրա մասնակցությամբ: Այնուհետև «գործը» շարունակվում է դպրոցում, ուսուցչի կողմից, և այսպիսով ապահովվում է ծնող-աշակերտ-ուսուցիչ եռակողմ հարաբերությունը: Միայն ընտանիքի կողմից ցուցաբերվող համապատասխան օգնության դեպքում ճիշտ կընթանա դաստիարակության նպատակաուղղված և արդյունավետ գործընթացը:

Փաստ է, ցավոք, որ հիմա ավելի շատ ենք բախվում բնավ էլ ոչ հուսադրող երևույթների, մասնավորապես աշակերտի բարոյահոգեբանական վիճակին վերաբերող: Կարելի է նույնիսկ մեկ բառով որակել այն՝ անտարբերություն:

Իհարկե, երևույթը չենք բացարձակացնում, այն անշուշտ միակողմանի չէ: Դպրոցը մենակ ի զորու չէ իրականացնել միայն իր վրա դրված պարտականությունների ողջ համակցությունը: Դպրոցին պետք է ընտանիքի և հասարակության բարենպաստ աջակցությունը: Թերևս չի կարելի բացառել նաև որոշ դեպքերում կործանարար ազդեցություն ունեցող ծնողական գործոնը: Ի՞նչ կարելի է ակնկալել մի աշակերտից, երբ նրա ծնողը պատշաճ վերաբերմունք չունի դպրոցի և ուսուցչի հանդեպ: Նման վերաբերմունքով նա միայն խեղաթյուրում է իր զավակի՝ միգուցե դրական պատկերացումները առ ուսուցիչ և դպրոց, շեղում է նրան դաստիարակության հիմնական օղակ հանդիսացող դպրոցի բարերար ազդեցությունից:

Ավելի արդյունավետ և դրական կազդեն համապատասխան առարկաների մտցնելը դպրոցական ծրագրեր և հասարակական ակտիվ գործողությունների ծավալումը: Թող աշակերտը կտրված չլինի հասարակությունից, լինեն հանդիպումներ, զրույցներ, ցերեկույթներ, շարժվեն աշակերտ-մարդու հոգեբանական որոշ «քնած» տարրեր, ի հայտ գան նրա մոտ գիտակցական ինքնադաստիարակչական և անձի ձևավորման կարևոր գծեր: Թող ծնողական կողմը դրականորեն ազդի աշակերտի հոգեբանության վրա, այլ ոչ թե շուկայական հարաբերությունների կամայականացումը ներարկի ուսման կարևորության մեջ:

Մեր վաստակավոր և փորձառու ուսուցիչներից մեկը մի անգամ մի այսպիսի արտահայտություն է արել՝ «Ժպտալով դաստիարակենք մեր աշակերտներին, բարի ժպիտով և խրատով, հասկանալով նրանց»:

Ամեն անգամ, դասարան մտնելով, առաջին միտքս այդ էր լինում՝ ժպտալով հասկանամ աշակերտ-մարդուն: Չէ՞ որ դա էլ յուրատեսակ միջոց է՝ թափանցելու նրա հոգին: Այդ ուսուցչուհին դասավանդել է նաև ինձ, և ես շատ լավ հիշում եմ նրան՝ հիրավի ժպտացող ու հասկացող…

Սակայն մի՞թե փոխվել է ամեն ինչ: Մի՞թե այսօրվա աշակերտը չի հասկանում մեր ժպիտի խորհուրդը, մի՞թե… Բազմաթիվ միթեներ, որոնց պատասխանը չկա: Ցավով և ստիպված ինքս ինձ հակասեցի՝ ժպիտով ամեն ինչ չէ, որ ստացվում է, գոնե՝ հիմա: Իսկ ի՞նչ անել, անընդհատ բարկանա՞լ, կոպի՞տ լինել օտարի, անծանոթի պես, մեկուսանալ դասարանից: Այդ էլ, համաձայնեք, լավագույն եղանակը չէ: Եվ միշտ ինձ հետապնդում է չհասկացված լինելու միտքը, կապանք դնում նույնիսկ ամենասրտագին ու ջերմ մարդկային հույզերի դրսևորմանը՝ աշակերտի առջև: Ժամանակակից աշակերտի հոգեբանությունը, այնուամենայնիվ, որոշակի զգույշ մոտեցում է պահանջում, և, ո՞վ գիտե, այնտեղ, որտեղ անօգուտ է հույզերի դրսևորումը, օգտակար կլինի յուրատեսակ պաշտոնականությունը՝ ուսուցիչ-աշակերտ հարաբերության մեջ: Միայն թե նման վերաբերմունքը տա ցանկալի արդյունքը դաստիարակության մեջ և հետզհետե խորթացում և օտարացում չծնվի ուսուցչի և աշակերտի միջև:

Կարինե ՓԱՌՅԱՆ
ԼՂՀ ԿԳՆ ԿՊՏ օտար լեզվի տեսուչ

ԱՍՈՒՊ

ԻՄ ՄԵՏԱՔՍԵՆ

(Բանաստեղծուհու հիշատակին)

2014թ. օգոստոսի 11-ին վախճանվեց ճանաչված բանաստեղծուհի Մետաքսեն:

Լայն ճանաչում գտած բանաստեղծուհի Մետաքսեն այն եզակի դեմքերից էր, որ տիպիկ կանացի իր ազատամիտ մտքերը համադրեց ավանդականին: Կարողացավ պարկեշտության սահմաններում իր հոգու անզուսպ զգացածն անմիջականորեն գեղագիտականի վերածել, ճանաչում տալ արդի մտավորական հայ կնոջ նիստուկացին, աշխատանքին, մտածողությանը, բառ ու բանին:

Երանի հագիդ վերնաշապիկին,
Որ գրկել է քեզ օրը ցերեկով
Եվ իր ծալքերի սեթևեթանքով
Փաղաքշում է հեթանոսական
Կրակը մարմնիդ:
Նրան ինչ, թե մի խելակորույս կին
Այրվում է խանդից արեգակի պես
Եվ երազանքի ճառագայթն աչքում
Տենչում է մի օր գոնե տաշտակում
Փայփայել նրան, որ հպվել է քեզ…(«Երանի»):

Հայաշունչ բանաստեղծուհին դարբնեց համամարդկայինն ու հայկականը, կանացին ու այրականն այնպիսի խյուսով, որ մտավ համաշխարհային միջավայր որպես հնովի ու նորովի խոսող գեղագետ:

Ես էլ նրա (Սաֆոյի-Ս.Մ.) նման ծարավ քնքշանքների,
Տոտիկ-տոտիկ երբ անցնում եմ մեր ծորերով,
Գրկում են ինձ տաք թևերը քարափների:
Սաֆոյի պես
Սիրտ զգացող այն կինն եմ ես,
Որ հոգու մեջ ունի ցավեր,
Եվ կորուստներ ունի անցյալ ու ապառնի,
Բայց կիսավեր
Իր գոյության բոլորումի լուրը կառնի,
Թե ունենա խենթ Սաֆոյի իմաստնության
Տարերքները հազար ու մի,
Որ սիրո հետ ժայթքում էին հրաբուխով՝
Կործանելով կապանքները վայելումի…(«Ես Սաֆոն չեմ»):

Մետաքսե Սերոբի Պողոսյանը ծնվել է 1928 թ. Արթիկի Արևշատ գյուղում, և աճյունը հիմա էլ ամփոփվեց այդտեղ (Պողոսյան ազգանունից դժգոհ էր երիտասարդ բանաստեղծուհին. իսկական ազգանունը Հովհաննիսյան էր. Ավ. Իսահակյանի խորհրդով 1950 թ. Մետաքսյա իր անվամբ հանդես եկավ որպես ստեղծագործող. 1952 թ. Նաիրի Զարյանի միջամտությամբ անվան –յա ածանցը –ե-ով փոխարինվեց «Հայրենիքիս» բանաստեղծության մոտ, ու այդպես ամբողջացավ այդ համարձակ կին գրող հրաշքը): Փոքր հասակում կորցրել էր հորը: Փոքրահասակ քրոջ հետ ապրել է հորեղբոր տանը (մայրն ամուսնացել էր ուրիշի հետ): Գյումրիի ու Փամբակի մանկատներում էլ է եղել: Վանաձորի ուսումնարանից հետո կրթությունը շարունակել է Երևանի Խ. Աբովյանի անվան ինստիտուտում: Մանկավարժ աշխատելիս՝ զգացել է, որ չի կարող ճիշտ գնահատող ուսուցչուհի լինել, թողել է այդ բնագավառը (երեխաների աղաչական-խղճուկ աչուկները բարձր ու կեղծ գնահատականներ են կորզել բարեմիտ ու մանկասեր բանաստեղծուհուց): 1958թ. ավարտել է Մոսկվայի՝ Մ.Գորկու անվան գրականության ինստիտուտը: Դիպլոմայինը բանաստեղծությունների առաջին գիրքն էր՝ «Ջահելություն»՝ 1957թ.: Կարծիքներ տվողներից մեկն անմահ մեծություն Պարույր Սևակն էր. Մետաքսեի լավագույն բանաստեղծություններում կա ամենագլխավորը բանաստեղծի համար՝ սեփական աչք, ինքնուրույն ձայն, մտքի և հույզի անմիջականություն. ես կասեի կանացի անմիջականություն:

Երևանում աշխատանքի է անցել Գրողների միությունում: Շփում է ունեցել արտասահմանյան շատ ստեղծագործողների հետ:

Ամուսնացել էր, ուներ մի դուստր (ներկայիս Լիլիթ բանաստեղծուհին, որը մոր նման անունը ստեղծագործողի կոչում դարձրեց): Մետաքսեի ստեղծագործությունները լույս են տեսել անընդմեջ, վերոհիշյալ առաջին գրքից հետո՝ «Կնոջ սիրտ» (Ե., 1960), «Ուրիշի արցունքները» (Ե., 1963), «Մաքրասեր Լիլիթը» (Ե., 1964), «Նվիրում» (Ե., 1968), «Զգույշ, սիրտ է» (Ե., 1974), «Լիլիթը և բադիկները»(Ե., 1977), «Հազար ու մի սեր» (Ե., 1981), «Սիրո թալիսման» (Ե., 1983), «Լեռները լալիս են գարնանը» (Ե., 1987), «Արցունքները չեն ծերանում» (Ե., 1989), «Շամիրամ» (Ե., 1995), «Աստծո տեսիլք» (Ե., 2002), «Հովհաննես Մկրտիչ» (Ե., 2003), «Ամենափրկիչ» (Ե., 2003), «Ճակատագրական կին» (Ե., 2006), «Զրույց աշխարհի հետ» (Ե., 2007), «Մենք ու մենք» (2011): Ինչպես նաև մեր մեծ մտածողներից պատառիկներ, որոնց հետ ամեն բնույթի շփում ունեցել է՝ «Հովի. Շիրազն իմ հուշերում» (Ե., 2002), «Պարույր Սևակն իմ կյանքում» (Ե., 2004): Մեծանուն բանաստեղծուհին կատարել է նաև թարգմանություններ (օրինակ՝ մակեդոնացի գրող Սլավկա Մանևայի Ջիջա, 2003թ., արձակ ևն): Մետաքսեն թարգմանված է բազմաթիվ լեզուներով:

Մետաքսեն խոսում է պարզ ու անմիջականորեն: Նույնիսկ աննշան դժգոհությունն էլ իր յուրատիպ գեղագիտական հանդերձով բանաստեղծական տողում էր: Ահա չորս տողանոց մի կտոր, որը սեթևանք է թվում , բայց ունի հոգեբանական խոր ցավ: Այն հանրածանոթ է նրբազգաց ու կատարյալ կանանց:

Դեռ ամուսին կա, աշխարհում կա դեռ,
Որին բերում ես կարոտներդ ողջ,
Նվիրվում նրան, համարում քեզ տեր,
Բայց նա ստրուկն է ուրիշ մի կնոջ…

Երբեմն նրա հոգեբանական խոսքի ընկերը կենդանական աշխարհն է, բնությունը՝ հատկապես ծիտիկներն ու շնիկները: Դա յուրահատուկ է ցանկացած մտածողի, որ ապրում, աշխատում, շփվում է նաև բիրտ հասարակությունում:

Քեզ վրա ավելի անքեն
Ու քիչ են հաչում, շունս,
Դավեր չեն լարում քո դեմ,
Ցավեր չեն տալիս, շունս:
Չեն խեղդում քո մեջ ոչինչ,
Հուսախաբ անում, շունս,
Մորթոտում երազդ ջինջ
Ու լուռ ծիծաղում, շունս:
Ոտքերիս փարվում, անկեղծ,
Տխրում ես, տխուր շունս ,
Աչքերիս մի նայիր խեղճ,
Ես եմ քո շունը, շունս …(«Շունս):

Համամարդկային այսպիսի հոգեբանական ապրումներն անասելի խորության են հասնում Աշոտ Երկաթ արքային նվիրած բողոք-զրույցում, ուր համարձակ մարդ-մտածողը կառավարականի շրջանակներն այդպես է հանդգնում մտնել:

Դու երկաթ էիր, ես կին եմ փխրուն,
Ես՝ լոկ բանաստեղծ, դու՝ մեծ թագավոր,
Քո սրի ծայրին արևն էր ծխում,
Ջեռքիդ Աստծո խաչն էր զորավոր:
Իմ դեմ զորք չկա, սուր չկա իմ դեմ
Իմ դեմ աթոռի ուժն է անաստված,
Ախ, Աշոտ Երկաթ, ես պողպատ եմ դեռ,
Որ դիմանում եմ, չեմ մեռնում հանկարծ…(«Աշոտ Երկաթ»):

Հայրենիքը, հավատը Մետաքսեի էությունն են: Աստծո տեսիլք, Հովհաննես Մկրտիչ, Ամենափրկիչ գրքերում Աստծո զորավոր հավատն է տարաբնույթ հարցերով շարակարգվում: Հավատի հետ կապված յուրահատուկ բառաշերտերը զուգակցվում են ԿԻՆ հասկացությանը, կերտում մետաքսեական յուրահատուկ ոճ (շիրազյան հակադիր կինն ու մայրը մեկտեղվում են, նրբամտորեն ջնջվում են կանացի անիմաստ, տղամարդկանց պրիզմայով անցած, բացասականները):

Ամեն մի կին տաճար է մի՝
Գավաթներով խորհրդավոր,
Կամարներով հոգեկանի
Ու մայրության գմբեթավոր:
Ամեն մի կին մատուռ է մի՝
Վառվող ցավի յուր մոմերով,
Ամեն սիրտ իր մեռոնն ունի՝
Նվիրումի նշխարներով:
Ամեն մի կին խորան է մի,
Ու նրա մեջ՝ սուրբ Տիրամայր,
Ամեն բախտ իր մատաղն ունի
Ու զոհվելու մի սրբավայր:
Ամեն մի կին՝մի պատարագ,
Շարական է կարոտների,
Քավություն է սիրով իր տաք
Ու ճգնավոր վայելքների:
Այր չունեցող կինը մոլոր
Տեր է թախծում հոգաբարձու,
Ախ, նման է նա մենավոր
Ու անգմբեթ եկեղեցու… («Ամեն մի կին»):

Կամ՝ սիրո զգացման ու աստծո հավատի խտացվածքի հոգեմոտ քնարական կառույցի մի հոյակապ շարական է Սեր իմ բանաստեղծությունը:

Թե վանքն ես դու իմ սիրո,
Ես գմբեթն եմ նրա լույս,
Թե մկրտես, խաչն եմ քո,
Դու՝ իմ Աստված, դու՝ իմ հույս:
Աղոթում եմ քեզ համար,
Ես սիրուդ եմ ճգնավոր,
Սերս եղավ տանջահար,
Հայացքիդ դեմ զորավոր.. («Սեր իմ»):

Հայրենիքը մերվում է սիրածին… Հայրենիք պաշտպանողները մեր այրերն են: Այդ հասկացությունների հոյեղ կառույցները սփռված են տարաբնույթ գործերում և կիզակետվում են Միացում անզուգական բանաստեղծությունում: Հայրենիքի ու սիրածի զորեղ զգացումները խորիմաստ բանաձևումներով ապշեցնում են իրենց ավանդական կառույցով:

Փշրվեին, խշրվեին մորմոքներս քո գրկի մեջ,
Մաս-մաս եղած բնաշխարհիս միացումի անուշ ցավով,
Արյունակից եղբայրներիս միացումի քաղցր ցավով,
Ցնծար հոգիս այս մի անգամ լիության մեջ («Միացում»):

Իր ժողովրդի հազարամյակներով հարուստ պատմությունը լավ սերտած բանաստեղծուհին նույնիսկ բառագործածական հնամենիությամբ է ապշեցնում: Մետաքսեի բառ ու բանում (այս կապակցությամբ Արցախը ևս իր լուման ունի) հնչում են ոչ գործուն տեղանուններ, կատարվում նրանց մասսայականացման աշխատանքը: Օրինակ՝ արդի Արարատ սուրբ սարի անունը «Արարատ» բանաստեղծությունում սովորականն է (Հրաշք Արարատ, ոգեղեն իմ լեռ, Ես եմ քո մայրը՝ Հայաստանը քո («Զրույց աշխարհի հետ», էջ՝ 194)), իսկ դրան զուգահեռ «Երկիր Արատտա» գործում նույնի հնամենի ձևն է՝ Արային է հիշեցնում, ինչպես նաև Հայաստանով՝ Հայա աստծոն է հիշեցնում:

Երբ շումերների և աքքադական
Քարտեզը գննես,
Դու ինքդ կզգաս, Տիգրիս, Եփրատ
Գետերի կապույտ ալիքների շուրջ,
Սուրբ օրենքների և
Անմահների երկիր Արատտան,
Աշխարհում իրավ միակ առաջին
Այն պետությունն է, որ ծնվել է այդ
Գետերի կանաչ ակունքների մոտ,
Լեռնային ծաղկուն,
Հայկական հզոր բարձրավանդակում,
Եվ հաստատելով ինքնությունն իր մեծ,
Ունեցել է միշտ և փառք, և համբավ,
Հարևանների մշակույթի մեջ…
Հայա աստծո քո չքնաղ երկրում…

Մետաքսեն նաև արցախանվեր բանաստեղծուհի է: 1980 թ. լինելով Արցախում, ծանոթանալով հիշարժան տեղանքներին (հատկապես Թարթառի՝ Տրտուի վերին հոսանքի տարածք) անդրադարձել է հիսունչորս բանաստեղծությամբ, ուր նաև պատմականը, ստուգաբանականը մեծ տեղ ունեն: Օրինակ՝ օտարաբան հնչող Ղարաբաղը իր մեկնությամբ՝քրիստոնեությունից առաջ եղած Կար/Ղար՝տեղ, Բաղք հնագույն հայերենում տարածված սովորական տեղանուն («Ղարաբաղ» բանաստեղծությունում): Աղդամի Աղավնի գյուղի (հնամենի փոստային մեծ ծառայություն) ու Սպիտակ շենի համադրումը և այլ անվանումների բաղարկության մեկնություններ (լեզվաբանական-ստուգաբանական հզոր աշխատանք է կատարված):

Արցախյան գոյապայքարի ընթացքում Մետաքսեի գործունեությունը հայրենանվեր է եղել (հանգանակության կազմակերպում՝ օգնության համար, հայրենանվեր զինվորների ոգեշնչում և այլն):

Արցախյան գոյապայքարին, Մոնթե Մելքոնյանին, Ասկոլկա Աշոտին և այլ հերոսներին նվիրված սրտառուչ բանաստեղծություններ են գրվել Մետաքսեի կողմից (դրանցից մի քանիսը երգի են վերածված):

Մետաքսեի գեղագիտական տքնանքում բառերի նորույթ շարահյուսական կապակցություններ են աչք շոյել ու շոյում…Ամենուր զգացվում է ավանդական կանացիությունը (կար ու ձևի, կարկատանի, լվացք-հարդուկի, սպասքեղենի մաքրության, խոհանոցային առօրյայի, երեխաների կրթական համակարգի գրենական պիտույքների, շախմատի և այլնի համադրումը բնական երևույթներին, մարդկային հարաբերություններին, զգացմունքներին՝ գեղագիտական յուրահատուկ ոճով):

Ահա մի շարք այդ տիպի կապակցություններ՝ *բախտի կար, ճակատագրի ասեղ, սխալ շուլալվեց մեր բախտը, մաքրակարերը մանրակարելով* («Սիրո կարկատան»), *Անձրևափոշին մաղվելով դանդաղ, Աշուն է հյուսում արևի ցոլքում , Ու երազների կայծերով բորբոք Աչքիս դեմ փռում կանաչ մի ցնորք,* («Անձրևն անտառում», «Զրույց աշխարհի հետ»), …երկնքի վանքում ամպեղեն մի կին ծնունդ է օծում, արեգակով կչորացնեմ գոգնոցն անձրևի, Անսանձ ձիերի խենթ քրքիջներ են նոտայի փոխվում, Կայծակի լուսե մատիտով գրվում երկնքի թղթին, կայծակների ճերմակ պարանին լվացք կփռեմ, Գորովանքիս տագնապների արցունքները մոգական Հուլունքվել են սիրուս ճամփին և այլն:

Այսպիսով՝ Մետաքսե բանաստեղծուհին հայ գեղագիտական իրականության մնայուն էջերից է, հայ կնոջ հոգու անկեղծ ու շիտակ թարգմանը, բանարվեստի տքնաջան մշակը:

Ս. ՄԻՆԱՍՅԱՆ
Բ. գ. թ., դոցենտ

ԱՄԱՌ-2014

ԼԻԱՐԺԵՔ ՀԱՆԳԻՍՏԸ ԿԱՐԵՎՈՐ ՊԱՅՄԱՆ Է ԵՐԵԽԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Յուրաքանչյուր մարդ ամառն առաջին հերթին արժևորում է հանգստի, հետաքրքիր ժամանցի կազմակերպմամբ, տարվա ընթացքում նախօրոք մտածում՝ որտեղ այն անցկացնել՝ բնականաբար, համապատասխանեցնելով իր նյութական հնարավորություններին: Մեզանում ամեն մեկն առավելապես շահագրգռված է առաջին հերթին երեխաների հանգստի լիարժեք կազմակերպմամբ: Գաղտնիք չէ, որ շատ թե քիչ նորմալ հանգիստը բավականին լուրջ գին ունի, ուստի այստեղ կողքից օգնությունը փրկության նման մի բան է դառնում, եթե հաշվի առնելու լինենք մեր բնակչության մեծ մասի նյութական սուղ միջոցները:

Խորհրդային շրջանում երեխաների ամառային հանգստի կազմակերպմամբ հիմնականում պետությունն էր զբաղվում: Ճամբարներում հանգստանում էին տարբեր տարիքային խմբերի գրեթե բոլոր երեխաները: Ետպատերազմյան շրջանում կար մի ժամանակահատված, երբ մեր երեխաների համար այդպիսի հանգիստը պարզապես երազանք էր: Սակայն գնալով պատկերը փոխվում է. տարաբնույթ ու բազմաբովանդակ ճամբարներ են կազմակերպվում, որտեղ ընդգրկվում են տարբեր նախասիրությունների հարյուրավոր պատանիներ ու աղջիկներ: Ու կարևորն այն է, որ այս գործընթացում ներգրավված են ոչ միայն հայրենի կառավարությունն ու տարբեր կազմակերպություններ, այլ նաև արտերկրի մեր հայրենակիցները: Եվ տարեցտարի ճամբարների աճը նկատելի ու զգալի է դառնում: Այս տարի ևս լուրջ աշխատանք է տարվել այս ուղղությամբ կոնկրետ Մարտունու շրջանում: Պատկերն ամբողջացնելու նպատակով դիմեցինք շրջվարչակազմի աշխատակազմի կրթության բաժնի վարիչ Զորիկ Ղուլյանին:

Բաժնի վարիչի տրամադրած տեղեկատվության համաձայն՝ հունիսի 20-ից հուլիսի 10-ը շրջանի սոցիալապես անապահով 39 երեխա հանգստացել է ՀՀ Հանքավանի ճամբարում, ուսման բնագավառում բարձր առաջադիմություն ունեցած 15 աշակերտ հանգստացել է Ծաղկածորի ճամբարում՝ հուլիսի 20-ից 25-ը: Հուլիսի 14-ից 24-ը Մարտունի քաղաքի թիվ 1 ավագ դպրոցի շենքում ՀՅԴ երիտասարդական թևի կողմից երեխաների հանգիստը տեղում լիարժեք դարձնելու նպատակով ճամբար կազմակերպվեց, որին մասնակցեցին 10-ից 17 տարեկան շուրջ 120 աղջիկներ ու տղաներ: «Հայկի սերունդ» երիտասարդական հասարակական կազմակերպությունը նախաձեռնեց ու կազմակերպեց «Հայորդիներ» համահայկական 4-րդ բանակումը՝ Շուշի քաղաքում, հուլիսի 1-ից օգոստոսի 11-ն ընկած ժամանակահատվածում, որը տեղի ունեցավ փուլ առ փուլ: Յուրաքանչյուր փուլի տևողությունը կազմել է 7 օր: Ընդհանուր առմամբ կազմակերպվել է 6 փուլ՝ Արցախի 10-20 տարեկան պատանիների և երիտասարդների համար: Յուրաքանչյուր փուլում շրջանից ընդգրկվել է 17 հոգի: Բանակումի ընթացքում կազմակերպվել են սեմինարներ, խաղեր, մրցույթներ, խարույկահանդես, մշակութային երեկոներ, հանդիպումներ հայտնի մարդկանց, Արցախյան պատերազմի վետերանների հետ, արշավ, այցելություն հրաձգարան: Օգոստոսի 5-ից 10-ը «Ասպետ» ռազմամարզական ճամբարում հանգստացան 10-րդ դասարանն ավարտած պատանիները, ինչը նաև կարելի է ասել, որ դա նրանց համար հետագա բանակային ծառայության նախապատրաստական փուլ էր: Օգոստոսի 28-ից մինչև սեպտեմբերի 11-ը շրջանից 2 երեխա իրենց հանգիստը կանցկացնեն Հունաստանում:

Մի խոսքով՝ ամեն ինչ արվում է, որպեսզի մեր երեխաները կարողանան ամառային շրջանում լիարժեք հանգստանալ, շփվեն իրենց հասակակիցների հետ, ձեռք բերեն նոր ծանոթություններ, ինչպես նաև զինվեն նոր գիտելիքներով ու կարողություններով: Եվ որ շատ կարևոր է՝ ճամբարներում ընդգրկվում են բոլոր տարիքային խմբերի երեխաները, կազմակերպվում են բացառապես պետական, հասարակական հիմունքներով, որտեղ ծնողները ոչ մի ներդրում չունեն: Եվ գնալով ավելի է բարձրանում նրանցում գործունեություն իրականացնողների աշխատանքի որակն ու մակարդակը, ուշադրությունը և վերահսկողությունը ուժեղացվում ինչպես երեխաներին մատուցվող սննդի ու ճամբարային կյանքի կազմակերպման պայմանների, այնպես և այն գիտելիքների մակարդակի նկատմամբ, որ ստանում են ճամբարականները:

Զ.Ղուլյանը հույս հայտնեց, որ հաջորդ տարիներին կհամալրվի ճամբարների շարքը, մեր երեխաները հնարավորություն կունենան ավելի հագեցած ու հետաքրքիր ամառային արձակուրդ ունենալ:

ՆՊԱՏԱԿԸ ՄԵԿՆ Է՝ ԿՐԹԵԼ ՈՒ ԴԱՍՏԻԱՐԱԿԵԼ ԱՌՈՂՋ ՈՒ ԽԵԼԱՅԻ ՍԵՐՈՒՆԴ

Աշանի «Սոսե» մանկապարտեզը գործում է 2000 թվականից: Սկզբում այն ֆինանսավորվում էր սփյուռքահայ հովանավորների հանգանակումներով, իսկ 2004-ից գտնվում է ՀՕՄ-ի հովանավորության տակ:

Ինչպես նշում է մանկապարտեզի տնօրեն Գայանե Հովհաննիսյանը, այնտեղ գործում է մեկ խառը խումբ, որում ընդգրկված է 23 երեխա: Այս տարի մանկապարտեզի նախապատրաստական խմբում ընդգրկված էր 6 երեխա: Նրանք արդեն պատրաստ են նոր ուսումնականին:

Մանկապարտեզն ունի 6 աշխատող, այդ թվում՝ մեկ դաստիարակ:

Շենքային պայմանները, տնօրենի խոսքերով, բավարար են: Նախորդ տարի ներսի հարդարման աշխատանքներ են կատարվել, իսկ այս տարի նախատեսում են փոխել սենյակների հատակը, նորոգել խոհանոցը և բակի ցանկապատը:

Աշանի մանկապարտեզում չկա գույքի, խաղալիքի, ուսումնական ծրագրերի ու ձեռնարկների խնդիր:

Արդեն 3 տարի է, «Սոսե» մանկապարտեզներում հունիսից-հուլիս ընկած մեկամսյա ժամկետում կազմակերպվում է առողջապահական միամսյակ՝ «Առողջ մանուկ, առողջ սերունդ, առողջ ազգ» ընդհանուր խորագրով: Միամսյակի շրջանակներում անց են կացվում պարապմունքներ առողջ ապրելակերպի մասին, երեխաներին տանում են մարզադահլիճ, կազմակերպում մարզական միջոցառումներ, մրցույթներ, նրանց ծանոթացնում երթևեկության կանոններին, անվտանգ վարքագծին:

Ընթացիկ տարվա միամսյակին երեխաներին տարել են Նորշենի և Աշանի բուժամբուլատորիաներ, ծանոթացրել, թե ինչպես է տեղում կազմակերպվում բուժական գործը, ինչպես նաև՝ հրդեհներից զերծ մնալու անվտանգության կանոններին: Այս նպատակով եղել են Նորշենում տեղակայված հակահրդեհային կենտրոնում: Միաժամանակ շրջակա միջավայրի և մեր պատմությանն ու մշակութային արժեքներին ծանոթացնելու նպատակով կազմակերպվում են էքսկուրսիաներ դեպի պատմամշակութային կոթողներ, տեսարժան վայրեր, եկեղեցի: Մանկապարտեզում հունիսի 12-ին անց է կացվել օրհնության օր, եղել են Նորշենի եկեղեցում: Մանկապարտեզի բոլոր երեխաները կնքված են: Ծրագրի համաձայն, հանդիպել են նաև ոստիկանության աշխատակցի հետ, զրույց ունեցել կարգապահության և անվտանգության մասին: Ամբողջ միամսյակը բաժանվել է երեք՝ «Մարզական», «Անվտանգ վարքագծի», «Բուժական» շաբաթների:

Տնօրենը նշեց նաև, որ ամառային շրջանում ջրային պրոցեդուրաներ են կազմակերպվում: Տոնական օրերին երեխաները նվերներ են ստանում, իսկ Նոր տարուն և մանկապարտեզին հրաժեշտ տալու ժամանակ արժեքավոր նվերներ՝ հովանավորից:

Արցախում ժասմեն Բունիաթյանին շատերն են ճանաչում և նրա յուրաքանչյուր այցելություն կապված է բարեգործության հետ: Այս անգամ նույնպես նրան հաջողվել է Արցախի «Սոսե» մանկապարտեզների երեխաներին ներկայանալ նվերներով՝ բերելով նաեւ համազգեստներ ու խաղալիքներ: Ժասմեն Բունիաթյանի Աշան այցելությունը մի առանձին ոգևորություն է բերել բոլորին:

Տնօրենն ասաց, որ երեխայի մանկապարտեզ հաճախելու համար ծնողը պետք է վճարի 6000 դրամ: Ցավոք, ոչ բոլոր ծնողներն ունեն այդ հնարավորությունը, ուստի որոշ սոցիալապես անապահով և բազմազավակ ընտանիքներ օգտվում են զեղչերից:

Բավականին լուրջ ուշադրություն է դարձվում սննդին: Մանրակրկիտ կազմվում է սննդացանկը՝ ուշադրություն դարձնելով սննդի կալորիականությանը, որակին:

Որպես խնդիր տնօրենը նշեց այն հանգամանքը, որ շենքը ջրաֆիկացված չէ: Բայց հույս կա, որ մոտ ժամանակներս այդ հարցը կլուծվի:

Գ.Հովհաննիսյանի խոսքերով՝ Արցախի ՀՕՄ-ը օգնության ձեռք է մեկնում դժվարության մեջ գտնվող մեր հայրենակիցներին: Արցախում գործող բոլոր «Սոսե» մանկապարտեզները մեծ ոգևորությամբ ողջունեցին և պատրաստակամություն հայտնեցին մասնակցել սիրիահայ մեր հայրենակիցների օգնության ծրագրին, որն առաջարկվեց ՀՕՄ-ի կողմից: «Սոսե» մանկապարտեզների աշխատողների, սաների եւ նրանց ծնողների համատեղ ուժերով պատրաստվել են ծանրոցներ՝ նշված ընտանիքների համար: Աշան գյուղում այս ծրագրին մասնակցել է ոչ միայն մանկապարտեզը, այլև ամբողջ գյուղը:

Կարինե ԴԱԴԱՄՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՎՈՒՄ Է ՄՐՑՈՒՅԹ՝ ԼՂՀ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԹԱՓՈՒՐ ՏԵՂԵՐԻ ՀԱՄԱՐ

ք. Ստեփանակերտ

Խ. Աբովյանի անվան հ.1 հ/մ - ֆրանսերեն լեզու՝ 20 ժամ
-ֆիզկուլտուրա՝12 ժամ
-դասվար՝ 20 ժամ
հ.6 հ/դ -երաժշտություն՝ 9 ժամ
-տեխնոլոգիա՝ 6 ժամ
- կերպարվեստ՝ 6 ժամ
Ավ.Իսահակյանի անվան հ.10 հ/դ -դաստիարակ՝ 1 հաստիք

Մարտունու շրջան

Կաղարծու մ/դ - անգլերեն լեզու՝ 18 ժամ

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման: Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ԼՂՀ կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված հարցաշարերի: Հարցաշարերը հրապարակված են «Լուսարար» պաշտոնաթերթի 2013թ. հ. 25-26-ում, առարկայական հարցաշարերը՝ 2014թ. հ. 23-24-ում և տեղադրված են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության edu.nkr.am կայք էջում:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1.Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է: (Ձև 1),

2.Փաստաթուղթ (դիպլոմ) «Հանրակրթության մասին» ԼՂՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,

3.Անձնագրի պատճենը,

4.Ինքնակենսագրություն (Ձև 4),

5.Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),

6.Մեկ լուսանկար՝ 3x4 չափսի,

7.Այլ պետությունների քաղաքացիները՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում աշխատելու իրավունք,

8. ԼՂՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև սեպտեմբերի 1-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից 15:00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից՝ համապատասխան դպրոցներում:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթները տեղի կունենան սեպտեմբերի 2-6-ն ընկած ժամանակահատվածում: Տեղի, ժամի և այլ տեղեկություններ ի համար դիմել համապատասխան դպրոց:

ԼՈՒՍԱՐԱՐ
ԽՄԲԱԳԻՐ՝ Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ
Հիմնադիր՝ «Լուսարար» ՓԲԸ
✉ Ստեփանակերտ, Հ. Թումանյան փ. 111, ☎ 94-38-99, E-mail: gorctert@mail.ru: www.lusarar.info
Մեջբերումների եւ փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:
Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլյուս» ՍՊԸ-ում: Տպաքանակ՝ 3140: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ:
Ստորագրված է տպագրության՝ 20.08.2014թ.:
«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: